Ազգ
Azg

Յուլիս
7
Չորեքշաբթի
1993

ՌԱՄԿԱՎԱՐ
ԱԶԱՏԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ
Գ տարի, թիւ 127 (378)
գինը 10 ռ.
դասիչ 69149
Երեւան 375010
Հանրապետութեան 47
հեռ. 581841, ֆաքս 562941
տելեքս 243266 CPIRI SU

Թբիլիսի

Շեւարդնաձեն ռազմական դրություն մտցրեց Աբխազիայում

Հուլիսի 6-ին ժամը 22-ից Շեւարդնաձեի հրամանով Աբխազիայում երկու ամսով հայտարարվեց ռազմական դրություն: Թբիլիսիում քաջատեղյակ աղբյուրները կարծում են, որ դա հնարավորություն կտա ավելի արդյունավետորեն պայքարել դասալքության դեմ:

Միաժամանակ երեկ վրացական զինուժը Օչամչիրի շրջանում հարձակման է անցել, զարգացնելով այն Տկվարչելիի ուղղությամբ: Վրացիների գործողությունները ղեկավարում են պաշտպանության նախկին նախարար Թենգիզ Կիտովանին, «Մխեդրիոնի» զինյալ խմբավորման ղեկավար Ջաբա Իոսելիանին եւ զվիադականների ջոկատների հրամանատար Լոտի Կոբալիան:

Մյուս կողմից, Հյուսիսկովկասյան կոնֆեդերացիայի կոչով երեկ կամավորների առաջին խումբը, ըստ որոշ տվյալների, մի քանի հարյուր մարդ, հիմնականում չեչեններ, արդեն մեկնեց Աբխազիա, կռվելու աբխազների կողմից:

▸ Տես էջ 7

Խմբագրական

Վառօդի տակառը եւ մենք

Հակառակ հանրապետութեան նախագահի հաւաստիացումներին, դեռեւս հեռու ենք պատերազմից խաղաղութեան փուլ ցատկելու պահից, դժբախտաբար: Ամբողջ տարածաշրջանում եւ մեր սահմաններում կայանում են իրադարձութիւններ, որոնք չեն կարող մեզ թողնել մեր երջանիկ խաղաղութեան մէջ: Վերջին յեղաշրջումը Ադրբեջանում բազմաթիւ հարցականների առաջ դրեց մեզ: եւ ոչ միայն մեզ, այլեւ շրջանային ու համաշխարհային ուժերին: Նոյնը, աւելի տաք եւ հրատապ, այս օրերին վերաճել է արիւնահեղ պատերազմի Վրաստանում, որտեղ մինչ էդ, Շեւարդնաձէն ՆԱՏՕ-ի օժանդակութեամբ ազգային բանակ էր ուզում ցանել, այժմ ստիպուած է Աբխազիայում հնձել ռուսական պայթուցիկներ:

Մեր մարմնի վրայ օր-օրի մեծանում է Ղարաբաղեան պատերազմի ծիրն ու տարողութիւնը: Տեղի հայկական ուժերը բնաւ տրամադիր չեն թոյլ տալ Բաքուում իշխանութեան գլուխ անցածներին ռազմական էժան յաջողութիւններով ամրանալ իրենց նորագրաւ դիրքերում: եւ իրաւացիօրէն: Դա կատարուել է իրենց մեր՝ արեան եւ իրաւունքների գնով: Ու բնականաբար, Մարտակերտի ազատագրումից յետոյ Աղդամի, Հադրութի եւ Ֆիզուլիի շրջակայքում կատարուող ռազմական գործողութիւնները «կարմիր խնձոր» չէին Մարիօ Ռաֆայելլիի համար: Միւս կողմից, երէկ Թուրքիան նորից կոչ արեց միջազգային հանրութեանը՝ զսպելու «ագրեսոր» հայերին, այդպիսով հասկացնելով բոլորիս, թէ ինքն նոյնպէս կայ «խաղի» մէջ:

Ամբողջ հարցը մեզ համար այն է, թէ արդեօ՞ք Ադրբեջանի նոր ղեկավարութիւնը պիտի փորձի ժամանակ շահել, հանգստացնել սեփական ջիղերը եւ հիմնական «գործը» վերապահել աշնանը, կամ առաջիկայ գարնանը: Դրա համար կռուան նա ունի՝ չէ՞ որ ամփոփուած է ադրբեջանական նաւթի արեւմտաթուրքական շահարկման գործը, որի համար պէտք է վարձատրել իրեն...

Այս հարցականների եւ անորոշութիւնների ֆոնի վրայ տարօրինակ եւ խիստ վտանգաւոր են ներհայկական ճակատի վրայ արձանագրուող վերջին փաստերը: Մի կողմից, արքունական խաղերի զոհ է գնում (կուսակցական եւ ներգործական իմաստներով) անցեալ տարուայ «Ազգային դաշինքը» պատրաստած գլխաւոր հերոսը՝ պաշտպանութեան նախարարը, մինչ ուրիշները պատրաստւում են ուռճացնել շարքերը պետնախարարների... Ինչո՞ւ, ի՞նչ նպատակով «արձակուրդային» այս տրամադրութիւնները անարդարացի մեր օրերում: Հուսալքումնե՞ր են պատրաստւում Հայաստանում: Իսկ միւս կողմից, ինչո՞ւ ճիշտ այս պահին է բռնում Պարոյր Հայրիկեանի պերիոդիկ պայթումները: Սոցիալ-տնտեսական վիճակը երէկ աւելի լաւ չէր, քան այսօր, եւ հաւանաբար վաղը աւելի լաւ չի լինելու, քան երէկ: Ո՞ւմ համար է աղմկում նա՝ Անկախութեան եւ Սահմանադիր ժողովի «մրրկահարը», ի՞նչ կապ կայ նրա գործողութիւնների եւ... արտգործնախարարի՝ հարեւան հանրապետութիւններում «խելական» ընդդիմութեան հրաւէր-օրինակի միջեւ: Եւ կամ ո՞ւր «երրորդ կողմի» համար են իրար քաշ տալիս նրանք՝ իշխանութիւնք եւ հայրիկեանականք:

Վառօդի տակառի վրայ է ամբողջ տարածաշրջանը, նաեւ՝ մենք: Մեր ժողովուրդը երջանիկ չէ եւ չի ուզում առաւել ապերջանիկ լինել: Մի՛ շահարկէք նրա զգացումները ուրուականների դէմ երկու կողմից սուր ճօճելով, մի՛ խաղացէք նրա ճակատագրի հետ, կրակի պար պարելով տաքի տակառի վրայ: ■

Ղարաբաղ

ԱՍԿԵՐԱՆԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԳՐՈՀԸ ԿԱՍԵՑՎԵՑ

Մարտակերտի շրջանում դիրքային մարտեր

Երեկ եւ նախորդ գիշեր իրադրությունը Լեռնային Ղարաբաղի արեւելյան ռազմաճակատներում շարունակվում էր մնալ լարված: Հուլիսի լույս 6-ի գիշերը եւ երեկ առավոտյան Աղդամի եւ Ֆիզուլու շրջանների ռազմական հենակետերից զենքի տարբեր տեսակներից ուժգին հրետակոծության են ենթարկվել Ասկերանի եւ Հադրութի շրջանների սահմանամերձ գյուղերն ու հայկական պաշտպանական դիրքերը: Հրետակոծության հետեւանքով Հադրութի շրջանում զոհվել է 6, վիրավորվել 9 մարդ: Այս մասին Ստեփանակերտից հաղորդում է մեր թղթակից ՎԱՀՐԱՄ ԱՂԱՋԱՆՅԱՆԸ՝ վկայակոչելով ԼՂՀ պաշտպանության բանակի շտաբից ստացված տեղեկությունները: Հայկական ուժերը դիմել են պատասխան գործողությունների: Ըստ Նոյյան Տապան գործակալության, հուլիսի լույս 6-ի գիշերը ադրբեջանական կազմավորումները լայնածավալ հարձակում են ձեռնարկել Ասկերանի շրջանի ուղղությամբ, սակայն հայկական ուժերին հաջողվել է ետ մղել թշնամու գրոհը: Շելլի գյուղի մերձակա բարձունքները առայժմ դեռ մնում են հայկական ուժերի վերահսկողության տակ: Ըստ նույն աղբյուրների, հուլիսի 5-ի երեկոյան ադրբեջանական բանակի ռազմական ինքնաթիռները խախտել են Ղարաբաղի օդային սահմանը եւ ռումբեր նետել Խանաբադ գյուղի մերձակայքում: Զոհերի մասին տեղեկությունները ճշտվում են:

Ինչ վերաբերում է Մարտակերտի շրջանին, ապա այստեղ երեկ եւ նախորդ գիշեր տեղական բնույթի մարտեր են ընթացել Մատաղիս եւ Լեւոնարխ գյուղերի մերձակայքում: Ռազմաճակատի գծի էական փոփոխություններ չեն արձանագրվել:

Իրենց հերթին ադրբեջանական աղբյուրները հաղորդում են, թե երեկ հայկական ուժերը շարունակում էին հարձակումը Ֆիզուլի եւ Ջեբրայիլի շրջկենտրոնների ուղղությամբ: Ըստ նույն աղբյուրների, ադրբեջանական բանակի կազմավորումներին իբր հաջողվել է Աղդամի շրջանում դուրս մղել հայկական ուժերին երեք օր առաջ գրավված յոթ գյուղերից:

«Ազգ»

Գ. Բաղդասարյան. «Ղարաբաղյան խաղաքարտի հետագա խաղարկումը բարդություններ կստեղծի»

Ստեփանակերտ, 6 հուլիս, Սնարկ: Ղարաբաղցիներն ուզում են, որ Ադրբեջանը լինի կայուն պետություն եւ հաշտության բանակցությունների հուսալի մասնակից, Սնարկ գործակալությանը տված հարցազրույցում հուլիսի 6-ին հայտարարեց ԼՂՀ Գերագույն խորհրդի մամուլի քարտուղար Գեղամ Բաղդասարյանը: Նրա խոսքերով, վերջին ժամանակներս մամուլում հայտնված այն պնդումները, թե Ադրբեջանի իրադրության ապակայունացումը ձեռնտու է Լեռնային Ղարաբաղին, անհիմն են թեկուզ այն պատճառով, որ պետության կայունությունը կանխորոշվում է նրա քաղաքականության կանխատեսելիությամբ: «ԼՂՀ ղեկավարությունը կողմնակից է հարեւան Ադրբեջանի ներքին գործերին չմիջամտելու քաղաքականությանը», ընդգծեց Բաղդասարյանը:

Միաժամանակ մամուլի քարտուղարը նշեց, որ ղարաբաղցիների համար այնուամենայնիվ նախընտրելի կլիներ գործ ունենալ այդ հանրապետության օրինականորեն ընտրված իշխանությունների հետ, որոնց օրինականությունը ճանաչել է համաշխարհային ընկերակցությունը: Նա ասաց, որ ղարաբաղցիները հավանություն կտան Ադրբեջանի այն ղեկավարին, որը ոչ թե խոսքով, այլ գործով կընտրի խնդրի խաղաղ լուծման ուղին: «Ադրբեջանի կողմից «Ղարաբաղյան խաղաքարտի» հետագա խաղարկումը հղի է լուրջ բարդություններով, ընդհուպ մինչեւ խաղաղ նախաձեռնությունների ձախողումը», եզրակացրեց Գեղամ Բաղդասարյանը: ■

Պարզաբանում

Ռաֆայելլին կայցելի շրջան... Ալիեւի հավաստիացումներից հետո

Չնայած զանգվածային լրատվության միջոցներն օր առաջ շտապեցին հաղորդել, թե ԵԱՀԽ Մինսկի խմբի նախագահ Մարիո Ռաֆայելլին այլեւս չի գա շրջան, իսկ Ադրբեջանի նախագահի պարտականությունները ստանձնած Հեյդար Ալիեւը դա բացատրեց Ֆրանս պրես գործակալության տարածած լուրերի՝ Աղդամը գրավելու փաստով, այնուամենայնիվ, նա վստահեցրեց, թե Ադրբեջանը տալիս է Ռաֆայելլի անձի անվտանգության երաշխիքները: Այդպիսով, ստանալով կողմերի, այդ թվում Ղարաբաղի ղեկավարության հավաստիացումները, Ռաֆայելլին որոշեց այցելել շրջան: Ինչպես տեղեկացանք ՀՀ ԱԳՆ մամուլի ծառայությունից, ԵԱՀԽ պատվիրակությունը, որի կազմում կլինեն 12 հոգի, հուլիսի 8-ին կժամանի Բաքու, հուլիսի 9-ին Երեւան, այնուհետեւ կվերադառնա Բաքու եւ հուլիսի 11-ին կմեկնի Ստեփանակերտ: Հուլիսի 12-ին Մարիո Ռաֆայելլին եւ նրա խումբը հանդիպելով երեք երկրների ղեկավարներին, ծանոթանալով նրանց տեսակետներին, շրջանի ներքին իրադրությանը, կվերադառնա Հռոմ, որից հետո միայն կհրապարակվեն ԵԱՀԽ նախաձեռնության անհապաղ միջոցառումների գրաֆիկի նոր ժամկետները: Մինչդեռ, ինչպես երեկ հաղորդեց ԻՖ գործակալությունը, վկայակոչելով Ադրբեջանի արտգործնախարարության լրատվության բաժինը, Մարիո Ռաֆայելլին կժամանի Բաքու ոչ թե հուլիսի 8-ին, այլ հուլիսի 9-ին:

Ա. Հ.

Հայաստան

Այգեպար գյուղում զոհվեցին երկու մարդ

Երեկ եւ նախորդ գիշեր Հայաստանի սահմանամերձ շրջաններում շուրջ երկու շաբաթ տեւած հարաբերական հանգիստը կրկին խախտվեց: Հայաստանի պաշտպանության նախարարության լրատվական ծառայության տվյալներով, հուլիսի 5-ի երեկոյան ադրբեջանական կազմավորումները զրահամեքենաներից եւ խոշոր տրամաչափի գնդացիրներից գնդակոծել են Արարատի շրջանի Երասխավանի եւ Մեղրու շրջանի Տիրանաձոր գյուղի հայկական պաշտպանական դիրքերը: Հայկական կողմից զոհեր չկան: Ավելի ուշ՝ հուլիսի լույս 6-ի գիշերը Ադրբեջանի Թովուզի շրջանի ռազմական հենակետերից գնդակոծվել են Տավուշի շրջանի Այգեպար եւ Մովսես գյուղերն ու հայկական պաշտպանական դիրքերը, որի հետեւանքով Այգեպար գյուղում զոհվել են երկու խաղաղ բնակիչներ: Հայկական ուժերը ստիպված են եղել դիմել պատասխան համարժեք գործողությունների, որից հետո կրակը դադարել է: Իրենց հերթին ադրբեջանական աղբյուրները հաղորդում են, թե երեկ եւ նախորդ գիշեր Հայաստանի տարածքից գնդակոծվել են Ադրբեջանի Թովուզի, Ղուբադլիի եւ Զանգելանի շրջանների սահմանամերձ բնակավայրերը: Մանրամասնություններ չեն հաղորդվում:

«Ազգ»

Տոկիո

Մեծ Յոթնյակի գագաթաժողովն այսօր

Երեկ Տոկիո ժամանեց Մ. Նահանգների նախագահ Քլինթոնը, զարգացած 7 երկրների պետերի հետ այսօր գումարվելու համար բոլոր դիտորդների կողմից կարեւոր նկատված գագաթաժողովը: Օդանավակայանում լրագրողների հետ կարճ զրույցից հետո Քլինթոնը հանդիպում ունեցավ վարչապետ Միյաձավայի հետ, արծարծելով Մ. Նահանգների եւ Ճապոնիայի միջեւ արտաքին առեւտրի հաշվեկշռում եղած մեծ տարբերության հարցը: Երեկ Տոկիո ժամանեց նաեւ Մեծ Բրիտանիայի վարչապետ Ջոն Մեյջորը, որը լրագրողներին հայտնեց, թե գագաթաժողովի օրակարգում կան կարեւորագույն բնույթի հարցեր, ինչպես Մեծ յոթնյակի երկրներում 27 միլիոն գործազուրկների պարագան: ■

Աշխարհ

Է. Բալադյուր. Չի կարելի միաժամանակ երկու խաղ խաղալ

Ֆրանսիայի վարչապետ Էդուար Բալադյուրը հայտարարեց, թե Ֆրանսիան ձգտում է, որ «ի վերջո մեկընդմիշտ արգելվեն բոլոր միջուկային փորձարկումները», ընդսմին երկրի միջուկային ուժերը «պետք է բոլոր պարագաներում բավարար լինեն»: Ելույթ ունենալով «Ֆրանս-2» հեռուստացանցի հաղորդման ծրագրով, նա հայտնեց, որ Ֆրանսիան որոշել է շարունակել միջուկային փորձարկումների սառեցումը, որի տեւողության մասին, վարչապետի խոսքերով, «այսօր անհնար է խոսել»: Անդրադառնալով համաշխարհային առեւտրի հարցերին, Է. Բալադյուրն ասաց, թե ինքը կուզենար, որ Եվրոպան եւ Միացյալ Նահանգներն ունենային «լավ հարաբերություններ, միաժամանակ հարգելով յուրաքանչյուրի իրավահավասարությունն ու արժանապատվությունը»: Չի կարելի միաժամանակ «երկու խաղ խաղալ», ձգտելով «թե փոխզիջման եւ թե միակողմանի պատժամիջոցներով ընդհարման», ասաց վարչապետը, նկատի ունենալով Միացյալ Նահանգների կողմից եվրոպական միավորման երկրների պողպատի ներմուծման սահմանափակումները:

ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՌ-ՏԱՍՍ

Քրդերը Երզնկայում սպանել են 29 հոգու

Թուրքական աղբյուրների համաձայն, երեկ կեսօրին Քրդական բանվորական կուսակցության (PKK) մարտիկները Երզնկայում (Էրզինջան) սպանել են 29 գյուղացու: Առանց նշելու կատարվածի մանրամասները, թուրքական աղբյուրները հայտնեցին, թե անցյալ մարտին հայտարարված հրադադարից ի վեր «այս ջարդը մեծագույնն էր PKK-ի կողմից կատարված ընդդեմ խաղաղ քաղաքացիների»:

▸ Տես էջ 5

Ռուխը դժգոհություն է հայտնում

Ուկրաինայի ժողովրդական Ռուխը գտնում է, որ Ղրիմում եւ Սեւծովյան նավատորմի շուրջ ստեղծված աղետալի իրավիճակն արտաքին եւ ներքին քաղաքականության եւ Ուկրաինայի զինված ուժերի շինարարության հարցերում նախագահ Կրավչուկի անհետեւողականության արդյունք է: Կիեւում հրապարակված հայտարարության մեջ Ռուխը կարծիք հայտնեց, որ Սեւծովյան նավատորմի վերաբերյալ Ուկրաինայի եւ Ռուսաստանի միջեւ ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացումը լուրջ վնաս կհասցնի Ուկրաինայի «պետական ինքնիշխանությանը եւ կսպառնա ազգային շահերին»:

Սնարկ

Մինչեւ տարեվերջ գները կաճեն 10 անգամ

1993 թ. առաջին կիսամյակում արժեզրկման աճի տեմպերը կազմել են 600 տոկոս, երեկ Ռուսաստանի խորհրդարանում հայտարարեց հանրապետության փոխվարչապետ եւ էկոնոմիկայի նախարար Օլեգ Լոբովը: Էներգակիրների գների ազատականացման հետեւանքով մինչեւ տարեվերջ գները հավանաբար կաճեն 10 անգամ, նշեց նա: Օլեգ Լոբովն առաջարկեց 2 տրիլիոն ռուբլով ավելացնել ներդրման ծրագրերի համար նախատեսված ծախսերը: Տվյալ գումարի մոտավորապես կեսը պետք է օգտագործվի բնակարանային շինարարության համար: ■

ՌԱԿ

Հանրապետական վարչությունում

Ռամկավար ազատական կուսակցության Հանրապետական վարչությունը հուլիսի 5-ի նիստում շարունակեց հանրապետության քաղաքական իրավիճակի շուրջ ծավալված քննարկումները:

Ելույթ ունեցողները՝ վարչության անդամներ Հակոբ Կարապետյանը, Ռաֆայել Պետրոսյանը, Հովհաննես Ղուրգարյանը, Գագիկ Օհանյանը, Ռոբերտ Մնացականյանը, Սամվել (Մելս) Մախակյանը, փոխանդամներ Գուրգեն Հակոբյանը, Պետրոս Ղազարյանը, ընդգծելով Հայաստանում առանց այն էլ ծանր սոցիալ-տնտեսական դրության էլ ավելի սրումը, անընդունելի համարեցին ներքին քաղաքական վիճակն արհեստականորեն առավել շիկացնելուն ուղղված ցանկացած միտում եւ միջոցառում:

Միաժամանակ, որպես քաղաքական ուժերի ներկա պայքարի հիմնական կիզակետ նշելով Հայաստանի նոր սահմանադրության ստեղծումը եւ ընդունումը, նրանք կարեւոր համարեցին այս խնդրի շուրջ անխտիր բոլոր կուսակցությունների ջանքերի ու ուժերի համախմբումը: Այդ նպատակով, չբացառելով սահմանադրության ընդունման բոլոր հայտնի՝ հանրապետության օրենսդիր բարձրագույն մարմին, սահմանադիր ժողով եւ հանրաքվեի ձեւերը, վարչությունը եկավ այն եզրակացության, որ ՀՀ Գերագույն խորհրդի դատին ներկայացված սահմանադրություններից խորհրդարանի կողմից բազմակուսակցական հիմունքներով ձեւավորված մի նոր մարմնի միջոցով մեկ, առավել ընդունելի տարբերակի ստեղծումը հարցի ավելի ճիշտ լուծումը կլինի:

Որոշվեց այս գաղափարի շուրջ հաստատական քաղաքական մյուս կազմակերպությունների հետ խորհրդակցություններ անցկացնել:

ՌԱԿ պատգամավորական 2-րդ ժողովի երկրորդ փուլի անցկացման կազմակերպական հարցերի մասին տեղեկացրեց վարչության փոխատենապետ Կարեն Կոստանդյանը:

Քննարկվեց ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավորների ընտրությունների թափուր օկրուգներում կուսակցության թեկնածուների առաջադրման հարցը:

Վարչությունը վավերացրեց Երեւանի Արաբկիրի եւ Շենգավիթի շրջաններում ստեղծված ՌԱԿ երկու ակումբները:

ՀՈՎՍԵՓ ՊՈՂՈՍՅԱՆ

Մոսկվա

«Կրիկը» դիմում է Չեռնոմիրդինին

Ռուս մտավորականության «Կրիկ» կազմակերպության անդամներ Անդրեյ Նույկինը, Վալենտին Օսկոցկին, Յուրի Չեռնիչենկոն, Վասիլի Սելյունինը, Վլադիմիր Դաշկեւիչը մի նամակ են ուղարկել ՌԴ վարչապետ Վիկտոր Չեռնոմիրդինին, Վիկտոր Պոլյանիչկոյին Հյուսիսային Կովկասի արտակարգ իրադրության վարչակազմի ղեկավար նշանակելու առթիվ: Որպես օրինակ նշվում է, Պոլյանիչկոն Ադրբեջանում ստացած իր փորձը օգտագործել է ԼՂԻՄ կազմկոմիտեի նախագահի պաշտոնում, երբ Ղարաբաղում սկսվեցին «անձնագրային ռեժիմի անմարդկային ստուգումները» հայկական գյուղերում, այդ ընթացքում շատ հայազգիներ պատանդ վերցվեցին, տանջամահ արվեցին, իսկ ադրբեջանցի օմոնականները խորհրդային բանակի հովանու ներքո ստանում էին, թալանում, բռնաբարում, մարդկանց արտաքսման համար ստեղծում անտանելի պայմաններ: Նրա օրոք էր նաեւ, երբ Ադրբեջանում հայտնվեցին առաջին ռուս զոհերը: Պոլյանիչկոն էր հրահրում, թե սպանել մի ռուս զինվորի եւ դրանում մեղադրել հայերին: Նա նաեւ «Օղակ» օպերացիայի ղեկավարներից մեկն է, երբ 4-րդ բանակի միջոցով ոչնչացվեցին Գետաշենն ու Մարտունաշենը: Չնայած դրան, եւ հակառակ մեծաթիվ ցուցմունքներին ու հավաստի փաստաթղթերին, Պոլյանիչկոյի դեմ հարուցված քրեական գործը մինչեւ վերջ չի տարվել օգոստոսյան խռովությունից հետո, ԽՍՀՄ դատախազության վերացման պատճառով: Այժմ ռուս մտավորականները կոչ են անում վարչապետ Չեռնոմիրդինին ընդունել իր սխալը եւ հեռացնել պաշտոնից արյունարբու եւ եղեռնագործ Վիկտոր Պոլյանիչկոյին, որը բացի ապակայունացումից, ոչ մի օգուտ չի կարող տալ Կովկասի ժողովուրդներին:

«Ազգ»

Տնտեսություն

ՁՄԵՌՆ ԱՌԱՆՑ ԳԱԶԻ, ՏԵՂ-ՏԵՂ ՋԵՌՈՒՑՈՒՄՈՎ ԵՎ ԿՐԿԻՆ ՀՈՎՀԱՐԱՅԻՆ ԱՆՋԱՏՈՒՄՆԵՐՈՎ

Որքան էլ այսօր ամառվա տապն ու շոգ օրերը մոռացության գիրկն են ուղարկում ձմեռվա ցուրտն ու սառնամանիքը, միեւնույն է, մարդկանց հիշողությունից երբեք չի ջնջվի 1993 թվականի աննախադեպ ձմեռը, երբ ծառահատվեց ողջ հանրապետությունը, հազարավոր մարդիկ, չդիմանալով ստեղծված պայմաններին, մեկնեցին օտար ափեր, իսկ ավելի չքավորներն ու անօգնականները մի կերպ գոյատեւեցին, հույսները դնելով նախագահի այն խոսքին, թե դա կլինի մեր վերջին ձմեռը: Եւ ի տարբերություն նախորդ տարվա անձեռնհասության, այս տարի կառավարության մակարդակով մշակվեց «Ձմեռ-93-94» ծրագիր, որը ներառում է ձմռան նախապատրաստական աշխատանքների ողջ դրույթը:

Այդ ծրագրի ղեկավարումը հանձնարարվեց պետական նախարար Գագիկ Մարտիրոսյանին, որը երեկ լրագրողներին ծանոթացրեց այդ ուղղությամբ կատարվող աշխատանքների ընթացքին: Այս տարվա հունվար-փետրվար ամիսներից սկսած կառավարությունը մշակում է «Ձմեռ» ծրագիրը, որի հիմնական նպատակն է հանրապետության կենսապահովման համակարգերի աշխատանքի, բնակչության ջրամատակարարման, էներգամատակարարման հնարավոր նվազագույնի ապահովումը, ներքին կարգ ու կանոնի, տրանսպորտի բոլոր տեսակների, հաղորդակցության ուղիների անխափան աշխատանքի հաստատումը:

Սակայն առկա խնդիրների մեծ մասը պայմանավորված է էներգետիկայի համակարգի աշխատանքով: Ընդ որում, արտադրվող էլեկտրաէներգիայի 2/3-ը կամ 80 տոկոսը ստացվում է ներկրվող պաշարների հաշվին: Փաստորեն, 93-94-ի ձմեռը կանցկացվի ոչ թե գոյություն ունեցող կայունացման կամ զարգացման ծրագրերի սահմաններում, այլ գոյատեւման: Այդ իսկ պատճառով որոշվել է, որ ձմեռը քիչ թե շատ լավ անցկացնելու նպատակով, պահեստավորվի ներմուծվող հնգային մազութի 80 տոկոսը, դիզելային վառելանյութի եւ բենզինի 30-40 տոկոսը: Այժմ կնքված պայմանագրերը եւ ստեղծված հաղորդակցության ուղիները թույլ են տալիս մեր հասանելիք 820 հազար տոննա մազութից բերել 440 հազարը, 210 հազար տոննա դիզվառելանյութից 180 հազարը, 120 հազար տոննա բենզինից 100 հազարը: Օրական 3,5 մլն. խմ. գազի ներհոսքի դեպքում հնարավորություն կստեղծվի, որպեսզի 700 հազար խմ պահեստավորվի: Մինչեւ նոյեմբերի 15-ը՝ ձմեռնամուտի սկիզբը ծրագրվում է կուտակել 340 հազար տոննա մազութ, 75 մլն խմ գազ, եւ 30-ական հազար տոննա բենզին, դիզվառելանյութ եւ վառարանային վառելիք: Կազմակերպվում է նաեւ մթերված վառելափայտի վաճառք հիվանդանոցներին, դպրոցներին, երեխաների տներին, ինչպես նաեւ 300 հազար տոննա քարածուխ կենսապահովման օբյեկտներին եւ ցածրահարկ տների բնակիչներին: Շարունակվում են նաեւ ջրամբարներում ջրի կուտակման աշխատանքները, քանի որ ձմռանն այդ հավաքված ջրի հաշվին օրական կտրվի 10-11 մլն կվտ ժամ էլեկտրաէներգիա, որը կկազմի օգտագործվող էլեկտրաէներգիայի 50-60 տոկոսը: Մի խոսքով, պահեստավորման աշխատանքները շարունակվում են: Բայց պրն. Մարտիրոսյանի ասելով, էլեկտրաէներգիան բնակչությանը կտրվի հովհարային անջատումների ձեւով, գազամատակարարում ընդհանրապես չի լինի, իսկ Նորքի զանգվածների, Ավանի, Էրեբունու, Դավիթաշենի բարձրահարկ շենքերում, ինչպես նաեւ Գյումրիում, Վանաձորում, 15-17 շրջկենտրոններում կլինի մասնակի ջեռուցում:

Այդ նպատակով միայն Երեւան քաղաքին կհատկացվի 80 հազար տոննա մազութ: Ցածրահարկ տների բնակիչներին կվաճառվի օրական 3 լիտր դիզվառելանյութ կամ վառարանային նավթ, ինչպես նաեւ հեղուկ գազ: Բաշխումը պետք է կատարեն շրջխորհուրդները եւ քաղխորհուրդները: Այս տարի հովհարային անջատումները կլինեն խիստ հսկողության տակ, նվազագույնը կտրվի օրական 3 ժամ, իսկ հավելյալ էլեկտրաէներգիայի ստացման դեպքում այդ երեք ժամը մի քանի անգամ համապատասխանաբար կկրկնապատկվի: Պրն. Մարտիրոսյանը նաեւ հայտնեց, որ եթե տարբեր տեսակի էներգագողություններին վերջ դրվի, ապա անգամ մազութի եւ այլ էներգակիրների բացակայության պայմաններում հնարավոր կլինի բնակչությանն օրական տալ 3 ժամ էլեկտրաէներգիա: Իհարկե, էներգետիկների աշխատանքը դժվարացնում են էներգացանցի ստացած վնասները, այդ համակարգի մաշվածությունը: Պետնախարարի կարծիքով, անգամ այդ պայմաններում 40 տոկոսով հնարավոր կլինի ձմռան ողջ ընթացքը դարձնել կառավարելի: Խնդիրներից մեկն էլ ձեռնարկությունների եւ բնակչության չվճարած պետական պարտքերն են՝ 7 մլրդ ռուբլի էներգիայի, 9 մլրդ ռուբլի գազի եւ 4 մլրդ ռուբլի նավթամթերքների համար: Թեեւ պրն. Մարտիրոսյանը նշեց, որ վերջին ամիսներին բնակչությունը ակտիվորեն մարել է պարտքերը:

Ամփոփելով, պետնախարարը հույս հայտնեց, թե կառավարության եւ ժողովրդի ջանքերով հնարավոր կլինի ավելի կազմակերպված դիմավորել ձմեռը, օգտագործելով ներքին ու արտաքին բոլոր պաշարները:

Եւ մի բան էլ խոստացավ պետնախարարը, որ կգործեն շարժական բրիգադներ, որոնք անմիջապես կվերացնեն վթարները: Կապրենք կտեսնենք:

ՀԱԿՈԲ ԱՍԱՏՐՅԱՆ

Ընդդիմություն

Եթերը յուրայիններին, իսկ այլոց ո՞ւր

Մեր թերթի հուլիսի 3-ի համարում տպագրել էինք «Տիգրան Հակոբյանի համար հստակ չեն պետական շահերի սահմանները» վերնագրով մի հոդված, որտեղ Հայաստանի հեռուստառադիոպետվարչության պետը հայտարարել էր, որ թեեւ «ինքս դեռ չեմ հստակեցրել պետական շահերի սահմանները», այնուամենայնիվ «սկզբունքային կլինեմ եւ թույլ չեմ տա, որ ֆաշիստական գաղափարախոսությունը եթեր մտնի, որովհետեւ ոչ մի պետություն քրեական տարրերին եթեր չի տալիս, իսկ այդ գաղափարախոսությունը ներկայացնում են քրեական տարրերը»: Թեեւ պրն. Հակոբյանը որեւէ անուն չէր հիշատակել, այնուամենայնիվ փորձառու իրազեկ ընթերցողի համար հասկանալի էր, որ խոսքն ամենից առաջ Հայաստանի Ցեղապաշտական կուսակցության եւ մասնավորապես նրա ղեկավար Շանթ Հարությունյանի մասին է: Այս առթիվ երեկ խմբագրություն եկավ ինքը՝ Շանթ Հարությունյանը եւ տեղեկացրեց, որ հուլիսի 5-ին հանդիպել է հեռուստառադիոպետվարչության պետի հետ եւ զրույց ունեցել, որի ընթացքում վերջինս հայտարարել է, թե «այո, դու ինձ համար քրեական տարր ես» եւ հաստատել կուսակցությանը եթեր չտրամադրելու իր մտադրությունը:

Ինքնին հասկանալի է պրն. Հակոբյանի նման դիրքորոշումը, մանավանդ, որ նա նույն ասուլիսի ժամանակ հայտարարել էր, թե «հեռուստատեսությունը պետք է սահմանափակ լինի ընդդիմության համար»: Սակայն Ցեղապաշտական կուսակցության ղեկավարն այն կարծիքին է, որ պատահական չէ կուսակցությանը եթերից զրկելու վերաբերյալ հայտարարությունը, քանի որ ամենաուժեղ ընդդիմությունն այսօր իրականացվում է հենց Ցեղապաշտական կուսակցության կողմից: «Իմ կարծիքով, Հայաստանի նախագահին պետք է միանգամայն բավարարեր այն ընդդիմությունը, որը հնչեց նրա հասցեին ՀՀՇ 5-րդ համագումարի ժամանակ», ասաց պրն. Հարությունյանը: Ես նրանց փոխարեն նախագահին կքննադատեի ազգային եւ հասարակական արժեքների ոտնահարման եւ հանրապետության կրթական համակարգի քայքայման համար: Այն ամենը, ինչ այսօր կատարվում է հանրապետությունում, ազգային գաղափարախոսության նկատմամբ գաղափարական եւ հոգեբանական դիվերսիա է: Պետական հեռուստատեսությունն արգելում է ազգային գաղափարախոսությունը եւ միաժամանակ եթերի մեծ մասը տրամադրում է ինչ-որ պոռնոգրաֆիական կամ այլ քարոզչության: Եւ այս ամենը կատարվում է հանրապետությունում օրինականորեն գործող կուսակցություններից մեկի նկատմամբ: Երբ այս ամենը հետագայում եւս շարունակվի, եւ կուսակցության նկատմամբ հալածանքները շարունակվեն (իսկ այդպես ենթադրելու համար հիմքեր կան), ապա մեզ կմնա միայն հայտարարել, որ կուսակցությունն անցնում է ընդհատակ եւ գործելու է գաղտնի՝ ինչպես Խորհրդային Միության ժամանակ»:

Շանթ Հարությունյանը տեղեկացրեց նաեւ, որ ներկայումս կուսակցությունը քննարկում է Տիգրան Հակոբյանին դատի տալու հարցը՝ ոչ միայն կուսակցության ղեկավարին, այլեւ ընդհանրապես ազգային գաղափարախոսությունը վիրավորելու համար:

Բոլոր դեպքերում, երբ հեռուստառադիոպետվարչության պետը վճռել է հեռուստատեսությունը սահմանափակել ընդդիմության համար, ապա պետք է հիշի, որ դա սեփական պարտեզը չէ, որ կարելի է արգելել անցանկալիների մուտքը, եւ քանի դեռ այս կամ այն կուսակցությունը կամ նրա ներկայացուցիչը օրենքով ճանաչված չէ որպես «քրեական տարր», իրավունք ունի օգտվելու եթերից, ինչպես, ասենք, իշխանությունները կամ նրանց աջակցող քաղաքական ուժերը:

ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Հուլիսի 6-ին ՀՀ արտգործնախարար Վահան Փափազյանը ընդունեց Ռուսաստանում Կիպրոսի արտակարգ եւ լիազոր դեսպան Անտոնիոս Վակիսին, որը Երեւան է ժամանել նաեւ Հայաստանում դեսպանի իր հավատարմագրերը հանձնելու նպատակով: Զրույցի ընթացքում համաձայնություն ձեռք բերվեց միջպետական հարաբերությունների հիմունքների մասին հայ-կիպրական դաշնագիր նախապատրաստելու մասին: Նույն օրը դեսպանն իր հավատարմագրերը հանձնեց ՀՀ փոխնախագահին.

«Ազգ»

Բաքու

Ադրբեջանը կշարունակի գործարար կապերը

Վերջին ժամանակներս արտասահմանյան մամուլում հաղորդումներ են հայտնվել այն մասին, թե պաշտոնական Բաքուն մտադիր է սահմանափակել հարաբերությունները օտարերկրացի գործարարների հետ: Հերքելով այդ լուրերը, վերջերս արտասահմանյան նավթային ընկերությունների ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ Ադրբեջանի փոխվարչապետ Ռասուլ Կուլիեւը հավաստիացրեց, որ իր երկիրը մտադիր է այսուհետեւ էլ նրանց հետ զարգացնել գործակցությունն ավելի վաղ ձեռք բերված համաձայնությունների համապատասխան: Ադրբեջանի նախագահի պաշտոնակատար Ալիեւը «Ամոկո Կասպիան Սի Փեթրոլեում Քոմփընի» ֆիրմայի նախագահ Ռոբերտ Բլանտոնի հետ հանդիպման ժամանակ հայտարարեց, որ հանրապետության արտաքին տնտեսական կապերի բնագավառում որպես կարեւորագույն գերակայություն կմնան նավթարդյունաբերության ոլորտի համատեղ նախագծերը: Իր հերթին պարոն Բլանտոնը մամուլի ասուլիսում խոստացավ, որ «Ամոկոն» Բաքվից հետ չի կանչի իր ներկայացուցչին, ավելին, ներկայումս երկու կողմերը քննարկում են առաջիկա համաձայնագրի խոստումնալից հեռանկարները: Բլանտոնի խոսքերով, առավել արդյունավետ է թվում հանքավայրերի միասնական մշակումը:

Ինչպես հայտնի դարձավ իրազեկ աղբյուրներից, ամերիկյան «Յունոկալ-76» նավթային ընկերությունը Ադրբեջանի պետական նավթային ընկերությանը 10 մլն դոլարի վարկ է հատկացրել: Բաքուն մտադիր է պարտքը վճարել նավթով, որը «Յունոկալ-76»-ը կարդյունահանի իրեն հատկացված հանքավայրերից մեկում: Այդուհանդերձ, ամերիկացիները ուզում են մտնել արտասահմանյան այն ընկերությունների շարքը, որոնց հետ Ադրբեջանը երկարաժամկետ համագործակցության պայմանագրեր կստորագրի: «Բրիթիշ Փեթրոլեում» ներկայացուցչությունը պաշտոնապես հերքեց այն լուրերը, թե համատեղ նավթահանքերում շահույթի բաժնի վերաբերյալ փոխզիջողական լուծում չգտնելու դեպքում ֆիրման Ադրբեջանում կսահմանափակի իր գործունեությունը:

Սնարք

Նախիջեւանի սահմանապահները ենթարկվում են իշխանություններին

Խաբար-սերվիս գործակալության հաղորդման համաձայն, այն լուրերը, թե Նախիջեւանում տեղաբաշխված առաջին սահմանապահ ջոկատը չի ենթարկվում պաշտոնական իշխանություններին, իրականությանը չի համապատասխանում: Այդ մասին հայտարարել է Ադրբեջանի ազգային անվտանգության նախարարության սահմանապահ զորքերի վարչության պետ Իսկանդեր Ալլահվերդիեւը: Նրա խոսքերով, այդ ստորաբաժանումը, որի հրամանատարն է ժողպատգամավոր Շահմուրադ Ջաֆարովը, շարունակում է պաշտպանել հանրապետության սահմանները:

Սնարք

Ձերբակալվեց ժողճակատային Թ. Խալիլբեյլին

Չարտոնված հանրահավաքի կազմակերպման համար ոստիկանությունը 24 ժամով ձերբակալեց եւ դատի տվեց Ադրբեջանի ժողճակատի ստուգիչ-վերահսկիչ հանձնաժողովի անդամ Թաղի Խալիլբեյլին: Նա 61 տարեկան է, բանասիրության դոկտոր, Ադրբեջանի մանկավարժական համալսարանի պրոֆեսոր: Հուլիսի 4-ին առավոտյան ժամը 6-ին Բաքվի ոստիկանությունը տանտիրոջ բացակայության պայմաններում չարտոնված խուզարկություն կատարեց նրա բնակարանում: Պատանդ վերցվեց նրա 25-ամյա որդին, որն Իրանի գլխավոր հյուպատոսարանի թարգմանիչն է: Նա ասաց, որ իրեն պաշտոնական մեղադրանք եւ ձերբակալման արձանագրություն չի ներկայացվել: Նա երկու օր մնացել է բանտում առանց հացի ու ջրի: Հուլիսի 5-ին դատարանը նրան մեղադրեց հանրահավաքի անցկացման փորձի համար: Խալիլբեյլին պնդում է, թե դատարանում ներկայացված արձանագրությունները կեղծված են:

Սնարք

Լրագրողի էջ

ԿՂԶԻ ՑԱՄԱՔՈՒՄ

Օդանավակայան

«Թատրոնն սկսվում է կախիչից»: Իսկ «Ինչի՞ց է սկսվում հայրենիքը», եթե «Ողջ աշխարհը թատրոն է»: Երբ թատրոնը հասցված է աբսուրդի, որովհետեւ հայրենիքը հասցված է շրջափակման, ապա ո՞ր կախիչից է սկսվում ամեն բան: Օդանավակայանից: Եւ սկսվում է, եւ... շրջափակման աբսուրդի թատրոնում էլ կարող է ավարտվել: Հնարավոր է նախագահն առաջնորդվել է զուգորդական այլ կարգով, երբ երեք ամիս առաջ հրապարակեց երկու ամսվա ընթացքում օդանավակայանում կարգուկանոն հաստատելու վերաբերյալ հրամանը: Այսպես թե այնպես, դատելով ըստ այդ գործողության, նա գիտակցել էր «կախիչի նշանակությունը թատրոնում»: Սակայն հիշեցնելով, որ մեզ մոտ հրամաններն ու օրենքները ինքնանպատակ են, իսկ կյանքը մնում է կյանք, ես մեկնեցի գործողության վայրը, որպեսզի պարզեմ, թե հիմա այնտեղ ինչ է կատարվում:

«Սարսափի ֆիլմեր» շարքից

Իմ զինանոցում կար «սարսափի ֆիլմերի» կարգի մի քանի «սարսափելի» դեմք «Զվարթնոցի» կյանքից: Ասում էին, որ ա) հաստափոր պարոնները կարող են կասեցնել ինքնաթիռի թռիչքը մինչեւ վերջացնեն իրենց բեռներ բարձելը (դրանցից մեկի չափերը, ավելի ճիշտ՝ քանակությունը, ես դիտում էի լուսանցույցից, կատաղելով գրեթե մեկժամյա ուշացումից), բ) «հարգված մարդիկ» իրենց մեքենաներով հասնում են մինչեւ օդանավի սանդուղք (այդ կարգի ոտքերի համար անվայել է տրորել թռիչքուղու կեղտը եւ ցցվել հերթերում, մինչեւ մնացած «անասունները» ստուգումն անցնեն), գ) ինքնաթիռները բարձրանում են կիսով չափ դատարկ (իբր տոմսարկղներում տոմսեր չկան), իսկ հետո վերցնում են «նաղաստակներին» (թղթին էլ փող վաստակել է պետք, այդ թվում եւ ավիացիայի աշխատողներին), դ) ուղեկցողների հատուկ [illegible] թույլատրվում է մտնել թռիչքադաշտ եւ հետեւել ամեն ինչին՝ ընդհուպ մինչեւ թռիչք (ը[illegible]ների համար արեւելյան հյուրասիրություն), ե) պատահում է, որ բեռնված ինքնաթիռները օդանավակայանի վրա պտույտներ կատարելով հետ են բերում, որովհետեւ վայրէջքի գոտու համար վերջին պահին ուզում են նախնական պայմանավորվածից մի քանի անգամ ավելի, զ) ինքնաթիռի իջնելու ժամանակ ողջ բեռը բռնագրավվում է օդանավակայանին կից գործող մաֆիան, հիմար վիճակի մեջ դնելով դիմավորելու եկած իսկական տիրոջը, է) ինքնաթիռը թռչում է Երեւանի մեկ օդանավակայանից եւ իջնում մյուսում: «Ժամանած» բեռը մի ձեռքից անցնում է մյուսին, ը) օդանավակայանում կան բազմաթիվ անցքեր, որտեղից կարելի է խցկվել ներս եւ անել (գողանա՞լ) ուզածդ բանը, թ) կոմերցիոն երթերի տերերը (անգամ) բլեֆ անելով (կամ էլ ոչ), որ առանց լրացուցիչ վճարի չեն թողնում ինքնաթիռը թռչի, ուղեւորներից հավաքում են «այսքան» գումար, ժ) ռեկետը հասել է այն աստիճանի, որ փոխհրաձգություն է սարքվում ուղղակի թռիչքադաշտում:

Մի խոսքով, պատրաստվելով գրել այս նյութերը, այնքան այսպիսի պատմություններ հավաքեցի, որ կբավարարեր ոչ միայն մեր, այլեւ լատինական ու արաբական այբուբեններին: Ցավոք, մաֆիայի հարցում ինձ խորանալ չհաջողվեց: Թերթերից եկածներին նրանք չեն հարգում: Ուշացումների ու այլ անկարգությունների համար քրթմնջացող ուղեւորները թերեւս լրացրին իմ սարսափի ֆիլմերի ցուցակը, սակայն առանց հատուկ որոշակիության: Մնում էր ավանդական միջոցը՝ մասնագետներ գտնել: «Առանց ղեկավարության թույլտվության չեմ խոսի» կամ «միայն ոչ մամուլի համար» ավանդական արտահայտություններին դեմ առնելու ռիսկի գնով: Իմ էլ «մի անհանգստացեք, ազգանունները չեմ գրելու» ավանդական արտահայտությամբ: Ի դեպ, հանուն արդարության պետք է ասեմ, որ իմ զրուցակիցների պատճառաբանությունները տարաբնույթ էին: ա) առայժմ չափազանց քիչ բան է արված, որպեսզի կարելի լինի ինչ-որ բանի մասին խոսել, բ) դուք կգրեք, իսկ ինձ աշխատանքից կազատեն, գ) գրես, չգրես, դա ի՞նչ է փոխում: Եղան եւ այնպիսիները, որ չհրաժարվեցին ներկայանալ: Սակայն քանի որ ես չեմ կարող բոլորին ներկայացնել, ապա նախընտրում եմ առհասարակ չտալ ոչ մեկի անունը: Թեեւ հարգելով «առայժմ քիչ բան է արված» ասողների դիրքորոշումը, լիովին չէ, որ նրանց հետ համաձայն եմ: Անգամ ամենափոքր փոփոխությունը դեպի լավը մարդկանց հանգստացնող գործոն է, նշանակում է ինչ-որ բան արվում է: Միանգամայն անընդունելի է երկրորդ դիրքորոշումը, քանի որ տեղը կորցնելու վախի հետեւանքով լռելը մասնակցություն է տեղի ունեցող անօրինականությանը: Եւ վերջապես բացարձակ անընդունելի է երրորդ տարբերակը, քանի որ ամենից հաճախ (թեեւ խոշոր հաշվով դա էլ է շատ քիչ), երբ որեւէ բան փոխվում էլ է, ապա նրա համար, որ գրում են, ցույց տալիս, խոսում: Եւ քանի դեռ դա չեն գիտակցում նրանք, ովքեր ասելու բան ունեն, գրելը ավելի դժվար կլինի: Նյութը կառուցվում է առավելապես խոսուզրույցի հիման վրա, որը ոչ ոք երբեք չի ընդունի որպես գործելու համար լուրջ փաստարկ:

Ինչպե՞ս պատահեց, որ ոչինչ չպատահեց

Արտասահման թռչելու ժամանակ մոսկովյան մաքսային ստուգման ընթացքում ինձանից վերցրին գազի բալոնիկը: Իմ լրագրողական միակ զենքը, որը մեկ անգամ չէ, որ օգնել է ինձ «լրագրողի առօրյայում»: Ես ուղղակի մոռացել էի այն հանել պայուսակիցս: Այդ ժամանակ էլ ես լրջորեն մտածեցի, թե այդ ինչպե՞ս է պատահել, որ մեր օդանավակայանում մինչեւ այժմ ոչինչ չի պատահել:

«Անցկացնել կարելի է ամեն ինչ եւ ուզածդ քանակությամբ», դեռ ե՞րբ էին ասել ինձ իմ ծանոթները: Եւ իրոք անցկացրին: Անփորձ մարդուն դա անհնար կթվա: Եւ ինձ էլ էր թվում: Չէ՞ որ ստուգում են ձեռքի ճամպրուկն ու քեզ միայն: Իսկ ուղեբեռը... Ձեռքի ուղեբեռի մեջ էլ հարկավոր էր դնել իմ գազի բալոնիկը (եթե դա պետք լիներ) եւ էլ կան էլի ինչ-ինչ բաներ: Դա ըստ երեւույթին այդպես էլ արվում է: Ուղղակի նրա համար, որ համապատասխան տեխնիկա չկա:

Գրեթե բոլորը, ում հետ ես զրուցեցի, հայտարարեցին, որ միջազգային կանոնների համաձայն, մեր օդանավակայանը փակված պիտի լիներ, որպես անվտանգության, տեխնիկական հագեցվածության չափանիշներին եւ այլնին չհամապատասխանող: Թեեւ ավելացնում էին, որ նախկին հանրապետությունների օդանավակայանների համեմատ մերի կարգուկանոնն ավելի լավ է: Դա ինձ համար անտրամաբանական էր: Գրեթե 80 տոկոսն ասում էր, որ նախագահական հրամանագրի մտցնելուց ի վեր անչափ քիչ բան է փոխվել: Սակայն դա բացատրում էին ոչ թե անտարբերությամբ, այլ բոլորովին այլ բանով՝ հանրապետության ընդհանուր վիճակով: Հանուն արդարության պետք է նշեմ, որ իմ զրուցակիցները չէին ասում, թե հրամանագիրը հրամանագիր է, կյանքը՝ կյանք: Ընդհակառակը, հաստատում էին, որ օդանավակայանն այն սակավաթիվ կազմակերպություններից մեկն է, որտեղ այլ հավասար պայմանների դեպքում ավելի հեշտ կարելի էր կարգուկանոն հաստատել, քան որեւէ այլ տեղում, իսկ այն պատճառով, որ դա կիսառազմական կազմակերպություն է, կարգուկանոնի սովոր:

Մեր ժողովրդի մտածելակերպը լավ հայտնի է: Այնտեղ, որտեղ կարելի է հարցեր լուծել «աղեր ջանով», մենք այն նախընտրում ենք օրենքից: Որը եւ մեզ չի խանգարում մեկ այլ իրադրությունում բողոքել այն չկիրառելուց: Մենք այդպիսին ենք: Օդանավակայանն էլ գրեթե միակ կազմակերպությունն էր, որտեղ այս համակարգը գործում էր ավելի թույլ, որովհետեւ այն խստորեն կապված էր կենտրոնի, ռազմական եւ կարգապահության նկատմամբ ռուսական վերաբերմունքի հետ: Բնական է, որ երբ մեր քաոսն սկսեց ընդունել համակարգային չափեր, երբ օդանավակայանը ի լրումն դրա դարձավ արտաքին աշխարհի հետ կապող միակ թելը, երբ գործնականում ողջ առեւտուրը, այսպես թե այնպես, կատարվում էր միայն նրա միջոցով, դա չէր կարող չանդրադառնալ նրա «ներքին աշխարհի» վրա: Իմ զրուցակիցներից մեկն ասաց. «Գիտե՞ք, թե ինչ բան է շրջափակված Հայաստանը: Դա կղզի է ցամաքում»: Մենք կտրված ենք արտաքին աշխարհից, սակայն այն, այսպես թե այնպես ներազդում է մեզ վրա:

Օդանավակայանը գոյության լրիվ ինքնուրույնությամբ հանդերձ չի կարող լինել կղզի կղզում, որովհետեւ մնացյալ «արտաքին» աշխարհից, այսինքն հանրապետության ներքին աշխարհից նա չի շրջափակվել: Եւ ամենը, ինչ տեղի է ունենում այնտեղ, արտացոլվում է այստեղ: Քանի դեռ օդանավակայանը կլինի արտաքին ու ներքին աշխարհները կապող միակ թելը, այստեղ կլինի անկարգության հնարավոր կենտրոնը: Մինչեւ կարգուկանոն չլինի հանրապետությունում, այստեղ նույնպես չի լինի: Քանի դեռ մեր տնտեսությունը տեխնիկական ընդունված չափանիշներին հասցնելու համար միջոցներ չեն հատկացվել, շատ բան չի փոխվի:

Եւ այնուամենայնիվ, ի՞նչ է փոխվել թեկուզ այս «քիչ բանի» սահմաններում: Պետք է ասել, որ նախագահի հրամանը զուտ որպես թուղթ չի մնացել: Առաջին անգամ ստեղծվել է մի կոմիտե, որն այստեղ կատակով անվանում են ԳԿՉՊ: Դրա մեջ մտել են օդանավակայանի, պետական զանազան հիմնարկների, դատախազության, ՊԱԿ-ի, ՆԳՆ-ի աշխատակիցներ եւ այլն: Պարբերաբար անցկացվում են խորհրդակցություններ, ձեռնարկվում որոշակի միջոցներ: Որոշակի կարգուկանոն է հայտնվել, դա միանշանակ է, հավաստիացնում էին ինձ: Դուք հիմա ոչ սանդուղքների մոտ մեքենայով հասնող «պարոնների», կտեսնեք ոչ թռիչքադաշտում ուղեկցողների, նույնիսկ ռեկետ անողների հետ հաշիվները մաքրել են: Արդյոք հե՞շտ է եղել, եւ ինչո՞ւ են դրա համար սպասել հրամանագրին: Նրա համար, որ հեշտ չի եղել, իսկ հրամանագրին սպասում էին, որովհետեւ այն ամրացված էր համապատասխան օժանդակ ուժով: Թեկուզեւ հենց մարմինների այն տղաներով, որոնք գիտեն նույն ռեկետ անողների լեզուն ու իրավունքները: Երբեմն էլ առանց փոխհրաձգությունների յոլա չեն գնացել:

Սակայն, այդուհանդերձ, կարգուկանոնի մասին խոսելը շատ շուտ է: Իսկ ինչպե՞ս կարգուկանոն պահանջեն, երբ ռացիան ու զենքը պահակության համար ճոխություն են, այլ ոչ թե հանդերձանքի բնական բաղադրիչ: Ինչպե՞ս խոսել դրա մասին, երբ օդանավակայանի ցանկապատը քանդում գողանում են մերձակայքի բնակիչները իրենց կարիքների համար: Ինչպե՞ս խոսել այն մասին, թե ռեկետին մեկընդմիշտ վերջ է տրված, երբ կա ապրանքների զգալի պակաս: Պակասը արտաքին աշխարհի հետ հաղորդակցության միջոց չէ: Այն փոքրիկ կարգուկանոնը, որ հաջողվել է ստեղծել, ժամանակավոր է: Այն պահպանվում է «ԳԿՉՊ»-ի խանդավառության եւ նախագահի հրամանագրի «թարմության» հետեւանքով:

Ահա թե ինչու օդանավակայանի մաֆիան ոչ թե մահացել է, այլ ավելի շուտ ցույց է տալիս, թե անցել է «քաղաքավարի» մեթոդների: Իսկ դա ավելի վտանգավոր է: Դա դեռեւս պահանջում է ճանաչել եւ, համապատասխանաբար, պայքարի նոր ձեւեր:

ԻԴԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Լրագրող

«ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ» ՀԱՄԵՐԳԱՍՐԱՀ

«ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ-90» ՓԱՌԱՏՈՆ

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ԼԱՐԱՅԻՆ ՔԱՌՅԱԿ

8 հուլիսի
Կամերային երաժշտության համերգ

Այդ օրը հանդես կգա Երեւանի լարային քառյակը (Արտաշես Սկրտչյան, Դավիթ Մովսիսյան, Ալբերտ Բոլուսյան, Սեդա Աբրահամյան): Լայն գործունեություն ծավալած այս խմբին վերջերս շնորհվել է Արամ Խաչատրյանի անունը (կոմպոզիտորի 90-ամյա հոբելյանի առթիվ):

Դմիտրի Շոստակովիչի թիվ 3 կվարտետը գրվել է 1946 թ. եւ կրում է Հայրենական մեծ պատերազմի ողբերգական իրադարձությունների կնիքը: Նրա հնգամաս կերտվածքում առանձնահատուկ դեր է հատկացված խորունկ թախիծ արտահայտող Պասակալիային (չորրորդ մաս):

Շոստակովիչի կվարտետից ընդամենը մեկ տարի անց է գրվել Էդվարդ Միրզոյանի Լարային կվարտետը («Թեմա՝ վարիացիաներով»): Դրամատիկական, քնարական, ողբերգական էջեր պարունակող այս գործը հայ կվարտետային գրականության թերեւս ամենից հաճախ կատարվող ստեղծագործություններից է:

Արամ Խաչատրյանի երկերից այդ օրը կհնչեն կյանքի վերջում գրված երկու մենանվագ սոնատները: Թավջութակի սոնատ-ֆանտազիան կկատարի Սեդա Աբրահամյանը, ջութակի սոնատ-մենախոսությունը՝ Արտաշես Սկրտչյանը:

Սկիզբը՝ ժամը 17:30-ին

Տոմսերը վաճառվում են «Արամ Խաչատրյան» համերգասրահի տոմսարկղում, ժամը 11:00–18:00:

Վանաձոր

Վերադառնում են Ղարաբաղ

Ղարաբաղի հայկական բնակավայրերի ազատագրումից հետո սկսվել է հոսքը դեպի հարազատ օջախներ: Միայն Վանաձորից այս տարի իրենց հայրենի տուն են վերադարձել 100-ից ավելի ընտանիքներ:

Վանաձորում տիֆի մեկ դեպք

Գրանցվել է որովայնային տիֆի մեկ դեպք: Վանաձորի սանէպիդկայանի գլխավոր բժիշկ Էդիկ Ջալալյանը տեղեկացրեց, թե քաղաքում զգալիորեն շատացել է վարակիչ հիվանդությունների թիվը: Նախկին 2-3 դեպքի դիմաց վերջին օրերին արձանագրվում է օրական 7-8 դեպք: Բժշկի կարծիքով, հիվանդությունների գլխավոր պատճառը օգտագործվող սննդի պահպանման կանոնների անտեսումն է: Լրացուցիչ տեղեկություններ հայտնեց առողջապահության բաժնի վարիչ Համլիկ Բաղայանը, նորից գրանցվել է [illegible] ձկից թունավորման վեց դեպք: Ձեռք են առնվում բոլոր միջոցները հիվանդներին արագ ախտորոշելու եւ օգնություն ցուցաբերելու համար:

Քաղաքի վերականգնումը շարունակվում է

Անցած ամիս Վանաձորում բնակեցման է հանձնվել եւս 5 բնակելի շենք յոթը ընթացիկ տարում: Երկրաշարժից հետո մինչեւ օրս պատվիրատուին է հանձնվել 4135 բնակարանով 310 շենք, որը նախատեսվածի ընդամենը 37 տոկոսն է: Բնակարաններից բացի օրերս շահագործման է հանձնվել երկու մանկապարտեզ Տարոն-2 թաղամասում եւ Սպանդարյան փողոցում:

«Գոհար» կոնցեռնը «Գոհարին»

Բոլորին են հայտնի Մոսկվայի «Գոհար» կոնցեռնի բազմաթիվ բարեգործությունները (նախագահ Սերժ Ջիլավյան): Օրերս հաճելի լուր ստացանք Մոսկվայից նոր վերադարձած Հայաստանի մանկապատանեկան «Գոհար» մշակութային միության նախագահ Զանյետ Երիցյանից: Մեծ բարեգործը մեկ միլիոն ռուբլի է հատկացրել «Գոհարին», միաժամանակ ստանձնելով միության մշտական հովանավորությունը: Երեկ «Գոհար» միության անդամ 150 երեխաների անունից շնորհակալագիր է ուղարկվել Սերժ Ջիլավյանին:

ՄԱՆՎԵԼ ՄԻԿՈՅԱՆ
Մեր սեփ. թղթակից, Վանաձոր

Կապ

«Նոր Արեւելքն» առաջարկում է օգնել ԱՊՀ-ին

Հունիսի վերջերին Մոսկվայում կայացած «Ռուսաստանի մեծ ու միջակ ձեռնարկությունների միջազգային երկրորդ կոնգրեսում» տնտեսական համագործակցության աջակցող «Նոր Արեւելք» ընկերությունը (Մյունխեն) ԱՊՀ երկրների, այդ թվում Հայաստանի ներկայացուցիչներին առաջարկել է հստակ մշակված ձեւ, որտեղ յուրաքանչյուր ձեռնարկության համար առաջադրված են հետեւյալ պարամետրերը. ինչ հետազոտություններ, գիտատար տեխնոլոգիաներ կան, ֆիրմաներին ինչ կապիտալ է հարկավոր, իրացման ինչ շուկաներ ունեն եւ այլն: Այս մասին հայտնեց ՀՀ արդյունաբերության նախարարության գիտության եւ արդյունաբերական քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ Իգոր Առաքյանը:

ՆՏ մեկնաբանությունը. «Նոր Արեւելքը» խորհրդատվական, ուսումնական, տեղեկատվական եւ կազմակերպական ծառայություններ է մատուցում պետական եւ առեւտրային կառույցներին, ինչպես նաեւ իրագործում է շրջանների, ֆիրմաների, ԱՊՀ եւ Կենտրոնական Եվրոպայի երկրների ձեռնարկատերերի անմիջական կապերի զարգացման ծրագիր: ՆՏ

Մոսկվայի միջբանկային փոխանակային բորսայի երեկ կայացած սակարկության ժամանակ ռուբլու կուրսը դոլարի հանդեպ չի փոխվել եւ կազմել է 1058 ռուբլի մեկ դոլարի դիմաց: Վաճառվել է 35 մլն 450 հազար դոլար: ԻՖ

[illegible]

Գիտեմ, որ մեջբերումը սեփական գրվածքից անհամեստության սուր դրսևորում է անշուշտ, սակայն գայթակղությունն է մեծ, ավելին՝ մեկուկես տարի առաջվա եզրահանգման այսօրվա ստուգությունն է աներկբա:

Այսպես եմ գրել («Ձո ներս...», 9 հունվ. 1992 թ.).

«Ընդդիմությունն, այնինչ, զրկված է գաղափարական առանձնացմամբ, խորհրդարանական ու մեծախորհրդարանական ալեբախումներով: Քաղաքական, տնտեսական կամ սոցիալական ծրագրումների առումով ընդդիմությունը որևէ հավակնություն չի կարողանում ներկայացնել առայժմ տևական ժամանակ, ի զորու չէ համգամանորեն մեկնաբանել և հիմնավորել, թե մարդիկ հանուն ինչի գերադասություն պիտի տան այս կամ այն կուսակցության, խմբավորման, այլնին: Գործող իշխանությունները, այդպիսով, **հարազատ զավակի պես պիտի փայփայեն ընդդիմությանը**, որի յուրաքանչյուր ձախողում, ամեն մի հաղթաշատ քայլ, ցանկացած դատարկություն միայն և միայն ամրապնդում է լծակները ձեռքին պահած համակարգը»:

Հանրապետության նախագահի վերջին երկու քայլերը («հեռուստացույց» կոչված համաժողովը ՀՌԱԿ և ՀՅԴ ղեկավարների հետ, ճառը ՀՀՇ V համագումարում) հաստատում են, որ «հարազատ զավակի պես փայփայելու» փուլն ավարտվել է. եկել է **այդ չկայացած ընդդիմությանը** հրապարակավ ձեռ առնելու, նրա հետ արհամարհանքով, մեծամտորեն խոսելու ժամանակը: Ընդամին, հանրության աչքում (հեռուստատեսության ազդու քարոզչությամբ) մի ավելորդ անգամ **«խանգարիչ գործոններից»** գլխավորը մատնացույց անելով, վերակենդանացնելու փորձ անել մի բան, **ինչ իրականում գոյություն չունի**: Որովհետև երբ ընդդիմությունը սահմանափակվում է խորհրդարանական խաղերով, լրագրային գրեհմարտով, ուշացած վերլուծություններով, ինքնաարդարացումներով, դադարում է լինել այդպիսին, վերածվում տակավին և կամավոր ախոյանի, ում հետ կարելի է խոսել նաև մաս բաժի սալոնով: Ու մեղավորն ամենևին էլ մաս բաժի տերը չէ:

Պարադոքսն ամբողջականանում է կիսամեծ հրետանու համազարկով (Գ-Խ նախագահի ելույթը). «Պատասխանատվության զգացումն է, որ այսօր ՀՀՇ-ին ստիպում է ինչ-որ չափով իր վրա վերցնել նաև ընդդիմության դերը»: Ինչ նույնպես հանրության աչքում մի ավելորդ անգամ **«ծինիչ գործոններից»** գլխավորն է մատնացույց անում, փորձելով վերակենդանացնել նաև մի բան, **ինչ իրականում նույնպես գոյություն չունի**: Հայոց, էլ չասենք համազգային, ուր մնաց թե՛ շարժում, չկա: Ներկայացուցիչները զանազան տրամաչափի հենց այն ասպիրանտներն ու դպրոցներն են, որոնք ներկա էին համագումարի դահլիճում: Երբ կան կառույցներ, օղակներ, փնտրեք ձեր հիմնարկություններում, հաստատություններում, շրջանում, քաղաքներում ու գյուղերում: Միավորներ գտնելիս ու հաշվելիս, ծալեք աջ ու ձախ ձեռքի մատները: Կամ հիշեք Գ-Խ նախագահի ասածը. «...երբ չլինեին այս դահլիճը, նրանցից դուրս գտնվող մեր համախոհները, չէին կարողանա վստահ աշխատել և նախագահը, և խորհրդարանը»: Պարզ, հստակ, անհերքելի: Դուք համախոհներ ունենալով, դեպի հասկանանք դահլիճում գտնվողների ազգաքանակը, ստացվածը:

Ընդհանրապես, երբ հանրապետության նախագահի ելույթն ու [illegible] տրամաբանության որոշակի մոդելավորված ունի, ապա դրա Բ. Արարքյանը, իրար խառնելով քայլ, հարց ու գործոն, ինչ-որ անհասկանալի «կոտրած ձևով» է ակնարկելու, և այդ [illegible] միայն մի հստակ [illegible] կարելի է անել, որ, [illegible] են, հետևյալը կլիներ. «Մի [illegible] է շրջում Արևելյան [illegible] այում ու ԷՄԼՆԳԷ-ի երկրներում ՀՀՇ-ի ուրվականն է»:)

Այո՛, կա իշխանություն, կան պետական կառույցներ, իշխանություններին հավակնողի դրդապատճառներով հավասարեցված ու անմռունչ ծառայելու պատրաստ օղակներ, այդ օղակների գլխավորողներ, որոնց նպատակը մեկն ու միակն է՝ եղածը պահպանել ամեն գնով: Եվ երբ ստիպված են լինելու հեռանալ, ապա միայն լեգիտիմ ճանապարհով:

Առերեսվելու, առերեսի խնդիր է: Մնացածները գոյատևողներն են: Սրանցից էլ ի՞նչ ուզես՝ թող զբաղվեն իրենց գոյատևմամբ: Դժվարին գործ է, հատկապես երբ զարգանում է, ասենք, ֆինանսական բուրգի բողբոջին...

նրանք... լինգ ու դագանակով:

Եվ միանգամայն ավելորդ են Հայաստանի ներկա իշխանությունների լեգիտիմությունը՝ օրինականությունը հաստատող փաստարկները: Երբևիցե որևէ առարկություն կամ տարակարծություն չի եղել այդ առիթով ու չի կարող լինել: Այո՛, ավելի քան լեգիտիմ են նրանք, մանավանդ, երբ հաշվի ենք առնում, որ յուրօրինակ լեգիտիմություն էր առկա, երբ փաստական իշխանություն չունեին, սակայն հոծ զանգվածների խնկական ու իրական պաշտպանն էին: Եվ լեգիտիմությունը երբ կասկածի առարկա չէ, ապա փրկագիր էլ չէ ամենևին: Ավելի լեգիտիմ, քան Հիտլերի իշխանությունն էր, սկսած 1933 թվականից,

ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

V (XV)

Կամ վտանգավոր խաղեր միստիկ թվերի հետ

Հանրապետության նախագահն, այսուհետով, ներքաշված հաղթանակն արձանագրեց ընդդիմության նկատմամբ, և փոքր չէ, թե «չեղածի» վրա կառուցեց իր պատմական (համագումարի ելույթներում քանի՞ցս հնչած բառերում) ելույթը: «Չեղածի» վրա շատ բան է «կառուցվել» ու «կառուցվում» մեր աչքի առաջ: Վերջապես բարեհաճեց պատասխանել նաև այս երկարաձիգ տարիների ընթացքում կուտակված «զրպարտանքին», «հայհոյանքին», «զազրախոսությանը» և այլն, նշանաբան դարձնելով դրսի դասարանների՝ կինոմատոգրաֆից մեզ հայտնի մուտքի պարտադիր խոսքը:

Նախագահն իրավացի է մեկ-երկու խնդրում, հատկապես խորհրդարանական խմբակցությունների անդամների պատգամավորական արտոններից հրաժարվելու բարոյականությունն ընդգծելիս: Իրավացի է, այո, և չինեղանալը, թե այդ դեմքում որևէ հավակնություն չի մնա, ընդամենը արժանավայել տեսք պահպանել է ստեղծված խաղի մեջ: Հավակնություն ասվածը նույնպես երեք տարի ի վեր անընդհատ ընթանում է, քանզի ընդդիմադիր քայլերը էական որևէ տեղաշարժի չեն հանգեցրել: Այլ խնդիր, որ հավաստիացումների և դավանափոխների մի զգալի մասն էլ հենց ՀՀՇ բնօջախներում է պատրաստվել: Սակայն խոսել այդ մասին, կնշանակեր իջնել-հասնել «հիմարն ինքդ ես» մակարդակին:

Նախագահն իրավացի է ատոմակայանի փակման հարցում: Անկասկած, ՀՀՇ դերն այստեղ երկրորդական է և հարկ չկա հիշեցնելու [illegible] հենց [illegible] տեղ ստանալը: Ժամանակին (երկու տարի էլ առաջ) այդ խնդրի [illegible] հնացումները այսօր թող չբավարարելով [illegible]:

Միանգամայն անխուսափելի է պնդումը, որ հաջորդ ընտրությունների ընտրողների վերաբերմունքով է պայմանավորված այսօրվա իշխանությունների գործունեության գնահատականը: Հարկավ, երբ անփոփոխ մնաց ամեն բան, ուրեմն, այդպես էլ պետք լինի, ընտրողներն ուրիշ ճակատագրի արժանի չեն: Որքան էլ դառը լինի և ցավալի, հարդարվածին, իրոք, չեն դասում: Իսկ ժամանակավորը [illegible], թե տնտեսները աղավաղված են, արդյունքները նենգափոխված, կամ խախտված է կարգը, օրենքը և այլն, ոչինչ փոխված կլինի յոկ: Բարի եղեք, բոլոր չսող այդ ամենը, բարի եղեք օրենքով աշխատել և արդյունավետ աշխատել ի նպաստ գործի, հետագայում էլ մի արդարացեք, իբր [illegible] աղքատ ծնողներով, իսկ

դժվար է պատկերացնել: Որովհետև ոչ միայն օրենքի տառը չէր խախտվել, այլ ոչ գերմանացիները տեսել էին իրենց կուռքին ու փրկչին:

Կարծում եմ, ՀՀ նախագահն այս ակնհայտ «զրպարտանքը» սեփական մեղքերի շարքը մտցրեց Վրաստանի, Տաջիկստանի կամ Ադրբեջանի իրադարձությունների «հայկական մոդիֆիկացիաների» ճանապարհը գոնե խոսքով փակելու նպատակով: Ամենևին չմտահոգվելով, որ արածը շատ էր նման խաչիկսամբրոցյանական հեռուստաշոուային ներկայացումներին, երբ վերջինս հայտնվում էր հեռուստախցիկի դիմաց, ինքն իր մասին ստեր մոգոնում, ինքն էլ հերքում էր դրանք:

Ավաղ, սակայն էլ [illegible] ՀՀ նախագահի այնքան երկար սպասված պատասխանների անաչառությունը, հիմնավորությունը, հիմնավորվածությունը:

Մասնավորապես, երբ դիմում է տարրական թվաբանությանը, վկայակոչելով վարչապետական երեք կաբինետների 36/5, 38/6, 38/5 փոխհարաբերությունները, չանդրադառնալով, որ ըստ հենց ինքն է հաստատելու, թե չի լինի «....., **ժխտել ներկա իշխանությունների ՀՀՇ-ական լինելու հանգամանքը**»:

Իսկ երբ սկսում է երկար-բարակ թվարկել երեք կաբինետների՝ իր ճանաչած նախարարներին, «ջախջախելու» համար անձնական նվիրվածության սկզբունքով նրանց ընտրելու և նշանակելու «հորինվածքը», տրամաբանի նշույլ իսկ չի մնում, որ դիմացինների կատարյալ անհասկացողի տեղ դնելը դարձել է բնավորություն և ըստ ամենայնի համոզված է նա, որ իր «երկարյա տրամաբանությունը» կփոշիացնի ամեն ինչ:

Այնինչ, իրավիճակը, որի ճիրաններում հայտնվել է հանրապետությունը, ճիշտ հակառակն է պարտադրում միանձնյա իշխանության բեռն ուսած նախագահին, ցանկացած բնագավառ (առաջնային, թե ոչ այդքան) պիտի ղեկավարի հենց այն մասնագետը, ում շատ լավ է ճանաչում նախագահը, ում վստահում է մինչև վերջ, ում կարողությունները, փորձը, մարդկային նկարագիրը որևէ երկմտություն չեն հարուցում: Որովհետև դժվարին ու բարդագույն ժամանակներ են, ամեն մի օր նախկին լճացման տարվա գին ունի, ոչ փորձերի ժամանակ է, ոչ «նոմենկլատուրային աթոռածալի», ոչ էլ նախարարություններն ու այլ օղակներ են վերապատրաստման դասընթացներ: Միաժամանակ, նախագահի դեմքն պարագային, ստացվում է, որ անդրադառնալ գոյություն ունի **կադրերի ավերային մի դարբնոց**, որի քուրայով և զնդանի տակով պիտի անցնեն ծանոթ-անծանոթները:

Եվ զուգահեռը ծնվում է ինքնըստինքյան: Հայտնի է (և դա է Մաքիավելիի քաղաքագիտականների ողնուղը), որ իր նախարարներին չի ճանաչում երկրի ղեկավարը, այդպիսով, անձնական նվիրվածության և որևէ շահագրգռության բացառման գրավականը Լիբիայի սիրակալ Մուամար Քադդաֆին է, որը նախարարներին կամ մուքասարիֆներին իր վրանում ընդունելիս, նրանց հաշվետվությունները ունկնդրելիս նույնիսկ, հայացքը վրանի դռանն հառած, մեջքը նրանց առած է նստում, որ հյուրերը հանկարծ չկարծե՞ն, թե... ճանաչում է նրանց, կամ որ (օ՜, ջհանդամի արժանի մեղք) նվիրված են միակ ու անկրկնելի սիրակալին: Քադդաֆին շա՞տ ժողովրդավար մարդ է...

Այսպես, մեկիկ-մեկիկ կարելի է անդրադառնալ տնտեսության քայքայման, «Նաիրիտի», Արցախի, սահմանադրության, հակառուսականության և 300-ամյա բարեկամության բարձրակետին, հայ ժողովրդի դառնակսման, Հայ դատի կեստրին...

Կարելի է, բայց և ավելորդ: Իզուր: Շատ է արծարծվել, տասնապատիկ ապացուցականությամբ հաստատվել, սակայն... «բակլան ինն է, խաբած եմ գանում»: Ազգընտիր եմ, ու՝ վերջ: Պետությունը ես եմ ու՝ վերջ... Այս անգամ էլ, ապտակող գլանի պես անցնելով ընդդիմության վրայով, ՀՀ նախագահը փաստորեն կրկնեց այն, ինչ իր կամ ոչ իր բերանով հայտարարել էր ի լուր ամենեցուն, եթե ոչ երկիցս (*), ապա գոնե մեկիցս...

Վստահ եմ սակայն, որ շատ ավելի տագնապալի ու չարագույժ է դառնում մոտալուտ ապագայի հեռանկարը, և եզակի դեպքերից մեկն է, որ տողերիս հեղինակը շատ կուզեր, թե սույն կանխագուշակումը սխալ լինի, անամոթ, անհող ու անհիմն:

Բանն այն է, որ ՀՀՇ V համագումարի ընթացքը, նախորդող և ուղեկցող հարցազրույցները, Գ-Խ նախագահի, ապա հանրապետության նախագահի ելույթները, հաղորդած քաղցրությունը պաշտոնական մամուլում, եթերում և էկրանին, կասեն թե ակամա, պատմական մեկ այլ զուգահեռ են պարտադրում: Ըստ որում, կարծես 65 տարի առաջ կաղապարված, այսօր նույնությամբ հրապարակ հանված:

Խոսքը վերաբերում է Համկ(բ)Կ XV համագումարին, որը հետագայում կոչվելու էր «հաղթողների համագումար»:

Տրոցկին վաղուց արտաքսված էր երկրից, ճակատագրի նույնպես Կամենև-Զինովև զույգը, ում իր «օպոզիցիա» էր ներկայանում, նախորդած քաղաքական դիսկուսիայի (*) ընթացքում հողին էր հավասարեցվել, սակայն ԿԿ քաղաքական հաշվետվության մի զգալի մասը «ժողովուրդների հայրը» հատկացրեց նրանց հիմնիվեր «ջախջախմանը»: Առանձնացրել էր յոթը կես [illegible]:

«Երբ օպոզիցիան կամենում է արդեն կուսակցության մեջ, ասել է Ստալինը, թող ներքաշվի կուսակցության կամքին, նրա օրենքներին, ցուցումներին առանց վերապահությունների, առանց դեսուդենի: Չի կամենում, թող հեռանա, որտեղ ավելի ազատ կլինի նրա համար: Մեր պայմանը մեկն է. օպոզիցիան պետք է զինաթափ լինի ամբողջովին ու լիակատար կերպով թե գաղափարական, թե կազմակերպչական տեսակետից: Նա պետք է բացահայտորեն ու ազնիվ կերպով ամբողջ աշխարհի առաջ հրաժարվի իր հակաբոլշևիկյան հայացքներից»:

Մեջբերումներով չծանրաբեռնենք լրագրային սեղմ տարածքը, բայց ընթերցողին առաջարկում ենք գրադարաններից կամ կրակի բերան չգցած որևէ դարակից գտնել ու կարդալ Ստալինի զեկուցումը: Համադրումների և համեմատելու ծով հնարավորություն կունենա, նույնիսկ ոճական, կոմպոզիցիոն առումներով: Նաև ընդհատող ծափահարություններով, ստվերից հնչող «ճի՞շտ է: ճի՞շտ է» բացականչություններով:

Իսկ ընկ. Ստալինի «ընդհանուր հանրագումարը» կազմված է արդեն տասը հակիրճ կետից.

«մենք պաշտպանեցինք խաղաղությունը շրջապատող պետությունների հետ...», «մենք պրոլետարական դիկտատուրայի հեղինակությունը բարձրացրինք...», «մենք որպես կուսակցություն օգնեցինք...», «մենք արեցինք այն ամենը, ինչ կարող է անել մի երկիր...», «մենք բարձրացրինք...», «մենք հաստատեցինք...», «մենք ամրապնդեցինք...» և այլն:

«Ո՞րն է եզրակացությունը, թերևս բեղի տակից հարցրել է Ստալինը: Եզրակացությունը մեկն է. մենք ճիշտ ուղու վրա ենք կանգնած, մեր կուսակցության քաղաքականությունը ճիշտ է»: (Ձայներ՝ «ճի՞շտ է»: Ծափահարություններ: Բոլորը ոտքի են կանգնում):

Պատմության սև էջերից հայտնի է նաև, թե ինչ հետևեց դրան. առաջին հնգամյակ, կոլեկտիվացում, 37 թվական... Դրան զուգահեռ՝ առաջնորդի անվան շնորհում բյուրավոր քաղաքների, ավանների, փողոցների, նավերի, դպրոցների, կոլխոզների, փառաբանական չափածոյի ու արձակված քծնության մրցարշավ, անթիվ հազարավորների անունից հավատարմության և միահամուռ պաշտպանության հեռագրեր ու զեկույցներ մամուլում:

Հանգիստ թողնենք 65 տարին, վերջին 6 ու 5 օրվա «Հայաստանի Հանրապետության» օրաթերթը աչքի անցկացնենք: Զարեհ Խրախունու և Մերուժան-բանաստեղծ, «Ժամանակակից հեքիաթ» մոնարխիստական այսպիսի խրատով. «Նա հայհոյեց բազմերին, և ես սրանեցի նրան», «Սևան» մարզական ընկերության բազմահազարանոց (*) մարզիկների անունից, Մ. Հերացու անվան բժշկական ինստիտուտի կողմից «... բոլորս ազգովի պիտի սատար կանգնենք Ձեր քաղաքականությանը» հավաստիացումներ, անվանաշնորհման առաջին ծիծեռնակ-յուրը հեռավոր ու աղահով Արգնիսինայից...

Այնպես որ լավ սկիզբը գործի կեսն է: Ուստի՝ օն անդր, առա՞ջ:

Հանրապետության նախագահը վերջին ելույթում հատկապես բծախնդիր էր ուղղակի խոսքի նկատմամբ. ասե՞լ է ինքն այդպիսի բան, թե՝ ոչ: Չի ասել: Ուրեմն, դեպք էլ չէ շարունակել: ՆԱ չի ասել:

Թատերական հրապարակում իր վերջին ելույթի ավարտին (1992 թ. փետրվար) սակայն մի շատ կոնկրետ խոստում արձակել է. «Տվեք ինձ հինգ տարի ժամանակ, և ես Հայաստանը դրախտ կդարձնեմ»: Տասնյակ հազարավոր մարդիկ լսեցին: Ոգեշնչվեցին, ոգևորվեցին, ծափահարեցին:

Ու ամեն-ամեն ինչ՝ ուխտադրժությունից մինչև տարածքների հանձնում, անտառների հատումից մինչև հազարավոր զոհեր, սնանկեր ու փախստականներից մինչև զանգվածային արտագաղթ, համատարած աղքատություն, կոռուպցիա, անպատասխանատվություն, անապահովություն, ցուրտ, քաղց ու տառապանք, իրոք, տանելի, դիմանալի, ընդունելի կլիներ, եթե ի՞նչ դրախտ, ի՞նչ բան... դժոխքի ներքին շրջանից եղածի արահետը գծագրվեր նույնիսկ: Արահե՞տը...

Ես չգիտեմ ու ոչ ոք չգիտի, թե որտեղ է գտնվում այդ «Դրախտի» տեսչի գրասենյակը: Գուցե «...վերջին երկու տարիներին պետության հովանավորությամբ Հայաստանի որոշ շրջաններում»... ծավալված անհատական շինարարության պարտեզներում և առանձնատնե՞րում...

Ինչևէ: Պահանջված հինգ տարիներից երկուսը (երեքը) կլրանա շուտով: Ժամանակի համարյա կեսն անցած է: Գործի կեսը՝ արված:

Ուստի՝ օն անդր, առա՞ջ:

Հ.Գ. Գիտեմ, որ լատինական թվանշանով նույն վերնագիր չի լինում: Արտառոց է: Բայց երբ արաբականը «616»-ով (լավ է դեռ ոչ «666»-ով, ասել է թե Նեռի խորհրդանշանով) ծանրաբեռնություն լինում է, անուղղակի ընդօրինակման համար ներողություն եմ խնդրում ընթերցողից:

Ա. Հ.

Քաղաքական

ՔՐԴԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՄՏՐԱԿ ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ՁԵՌՔՈՒՄ

Քրդստանի բանվորական կուսակցությունը՝ PKK-ն, հիմնադրվել է 1978 թ. նոյեմբերի 27-ին: Ունի ռազմականացված երկու կազմավորումներ: Առաջինը Քրդստանի ազատագրության ժողովրդական բանակն է՝ ARGK, որն ստեղծվել է 1984 թ. օգոստոսի 15-ին, իսկ երկրորդը 1985 թ. մարտի 21-ին ձեւավորված Քրդստանի ազատագրության ազգային ճակատը՝ ERNK: PKK-ն ու նրա ռազմականացված կազմավորումները ներկայացուցչական ընդարձակ ցանց ունեն Եվրոպայի տարբեր երկրներում, սկսած 1985 թ. զինված պայքար են մղում Թուրքիայի դեմ երկրի ներսում եւ նրա սահմաններից դուրս:

Թուրգուտ Օզալի հանկարծակի մահից հետո Թուրքիայի Հանրապետության նախագահի պաշտոնում նրան փոխարինեց մինչ այդ վարչապետ Սուլեյման Դեմիրելը: Քանի որ սա միաժամանակ զբաղեցնում էր «Ճշմարիտ ուղի» կուսակցության գլխավոր նախագահի աթոռը, ուստի օրակարգ մտան վարչապետի փոփոխության, նոր կաբինետի ձեւավորման, նաեւ կառավարող կուսակցության ղեկավարի ընտրության հարցերը: Երկրի քաղաքական կյանքում չափազանց կարեւոր տեղ ունենալով հանդերձ, սրանք ընթացիկ հարցեր էին եւ Թուրքիայի սահմանադրության ու «Ճշմարիտ ուղի» կուսակցության կանոնակարգի շրջանակներում գտան իրենց համապատասխան լուծումը: Այդ կուսակցության համագումարը գլխավոր նախագահ ընտրեց տիկին Թանսու Չիլլերին, եւ ինչպես ընդունված է երկրում, նա էլ Դեմիրելից ստացավ նոր կառավարություն կազմելու պարտականությունը: Տիկին Չիլլերը դարձավ վարչապետ, դրանով էլ հաղթահարվեց կառավարություն կազմելու խնդիրը:

Սակայն Թուրքիայի օրակարգում կա մի հարց, որի լուծումը, ինչպես երեւում է, վեր է միմյանց հաջորդող կառավարությունների ուժերից: Խոսքը PKK-ի գլխավորությամբ երկրում ծավալվող քրդական շարժմանն է վերաբերում: Ինչքան էլ պաշտոնական Անկարան փորձի քրդական շարժումը նույնացնել ահաբեկչականի հետ եւ համառորեն պնդի, թե քրդերի հարց Թուրքիայում որպես այդպիսին գոյություն չունի, պարզապես կա հարավարեւելյան շրջանների խնդիր, մի բան ակնհայտ է, որ անգամ հայտարարված արտակարգ դրության պայմաններում պետական իշխանություններին չի հաջողվում վերահսկել իրավիճակը այդ շրջաններում, ու նրանք անընդհատ տեղի են տալիս PKK-ի հետզհետե աճող ազդեցությանը:

PKK-ի զինված պայքարը Թուրքիայի դեմ այսօր արդեն լիովին միահյուսվել է քրդական շարժմանը, եւ այդ կազմակերպությունը դարձել է շարժման խորհրդանիշը: Անշուշտ, թուրքական իշխանությունները դա գիտակցում են, եւ խույս տալով երկրում քրդերի իրողությունը ճանաչելու իրենց իսկ խոստումների վրա, նպատակահարմար են գտնում ճանաչել ահաբեկչության իրողությունը: Այսպիսով PKK-ի ջախջախումը որպես ահաբեկչական կազմակերպության վերածվում է առաջնահերթ խնդրի: Թուրքիան, բացի ռազմականից, ձեռնարկում է քաղաքական մի շարք միջոցառումներ, երկրի հարավարեւելյան շրջանների բնակչության վիճակը բարելավելու անվան տակ PKK-ին քուրդ զանգվածների աջակցությունից զրկելու փորձեր է անում, որոնք ուղեկցվում են ամեն տեսակի բռնություններով, ընդհուպ բռնագաղթը:

Թուրքիայի քաղաքական թե ռազմական բոլոր ձեռնարկումներն արժանանում են Արեւմուտքի հավանությանը: Պարզորոշ կարելի է ասել, որ Արեւմուտքի նպատակը ներկա փուլում Թուրքիայի ձերբազատումն է PKK-ից ցանկացած եղանակով, որպեսզի նա հարմարվի Ադրիատիկից մինչեւ Չինական ծով ընկած ընդարձակ տարածքում իրեն հատկացված նոր դերին: Այն շահագրգռվածությունը, որ ցուցաբերում է Արեւմուտքը քրդական հարցի հանդեպ եւ ժամանակ առ ժամանակ բարձրացնում քրդերի իրավունքների ոտնահարման փաստեր, արվում է հատկացված դերի անշեղորեն իրագործումը Թուրքիայի կողմից ապահովելու, նաեւ քրդական շարժումը վերահսկելու միտումներով: Գաղտնիք չէ, որ հարցի հետագա շահարկումը հնարավորություն է տալիս սաստել շրջանի այլ պետություններին, կամ անհրաժեշտության դեպքում հրահրել այնպիսի հակամարտություն, որն իր ծավալներով հազիվ թե զիջի արաբա-իսրայելականին, եւ դրա մեջ ներգրավված լինեն Թուրքիան, Իրաքը, Իրանն ու Սիրիան:

Այդպիսի հնարավորությունների առկայության պայմաններում Արեւմուտքից սպասել, թե նա գործի ի նպաստ քրդական հարցի լուծման, իրատեսական չէ: Արեւմուտքին հետաքրքրում է ոչ թե հարցի լուծումը, այլ դրա շահարկման լծակների ստեղծումը: Իսկ շահարկման միտումներն ինքնին ենթադրում են ընթացող շարժման վրա վերահսկողության սահմանում, որն էլ հաճախ ձեռք է բերվում այս կամ հարցին միջազգային բնույթ հաղորդելու միջոցով:

Քրդական հարցի հանդեպ հետաքրքրությունն ԱՄՆ-ի եւ նրա դաշնակիցների մեջ առաջացավ Պարսից ծոցի ճգնաժամի օրերին: Սակայն կարճ ժամանակ անց մոռացության տրվեց: Այն վերստին օրակարգում հայտնվեց 1991 թ. ամռանը, երբ Սադդամի զորքերի ճնշման տակ հարյուր հազարավոր քրդեր, լքելով Հյուսիսային Իրաքը, փախուստի դիմեցին դեպի Իրան ու Թուրքիա: Թվում էր, թե քրդական հարցը միջազգայնացնելու միջոցով քրդերի շարժման վրա վերահսկողություն սահմանելու առաջադրանքը պսակվում է հաջողությամբ: Նախ, հաջողվել էր համոզել «Իրաքյան Քրդստանի հայրենասերների միության» նախագահ Ջալալ Թալաբանիին ու «Իրաքյան Քրդստանի դեմոկրատական կուսակցության» ղեկավար Մասուդ Բարզանիին Անկարայի հետ համագործակցել, ապահովվել էր վերջիններիս ու Արեւմուտքի Անկարայով միջնորդավորված կապը, վերոհիշյալ քուրդ առաջնորդներն ու շահագրգիռ կողմերը համաձայնության էին եկել Հյուսիսային Իրաքում ձեւավորվող քրդական ինքնավարությունը Թուրքիայի խնամակալությանը հանձնելու: Սակայն PKK-ի ինքնուրույն ու անհաշտ կեցվածքը, հատկապես նրա ազդեցության աճն ու դիրքերի ամրապնդումը, բացի Թուրքիայի քրդաբնակ շրջաններից նաեւ Իրաքի հյուսիսում, խառնեց խաղաքարտերը: Ահա թե ինչու Արեւմուտքը 1992 թ. աշնանը Թուրքիայի կողմից Հյուսիսային Իրաքում իրականացված լայնածավալ ռազմական գործողություններին, ի տարբերություն նախորդ տարիների, ըմբռնումով մոտեցավ:

Բայց եւ այնպես, ոչ թուրքական բանակի ներխուժումը Իրաքի տարածք, ոչ էլ դրան հաջորդած ռազմական նոր գործողությունների նախաձեռնումը արդեն երկրի հարավարեւելյան շրջաններում, որոնք ուղղված էին PKK-ի ֆիզիկական ոչնչացմանը, նպատակին չհասան: Այս անգամ առաջ քաշվեց հրադադարի տարբերակը: Դրա խաղարկումը, ըստ ամենայնի՝ ԱՄՆ օրհնությամբ, այդ կազմակերպությանը քաղաքապես ոչնչացնելու խորամանկ քայլ էր: Հասկանալի է, որ ինչպես թուրքական զինված ուժերի Իրաքի տարածք ներխուժման ժամանակ, այնպես էլ Թուրքիայի իշխանությունների ու PKK-ի միջեւ զինադադարի հաստատման աշխատանքների ընթացքում Թալաբանին ու Բարզանին Անկարայի հետ երկխոսության մեջ էին: Քուրդ առաջնորդներն անձնատուր լինելով Արեւմուտքի տրամադրություններին, փաստորեն ստանձնեցին PKK-ի ու Թուրքիայի միջեւ միջնորդի դերը:

Թե ի՞նչ հավաստիացումներ են արել ամերիկացիները Թալաբանիին ու Բարզանիին, դժվար է ասել: Բայց պարզ է, որ քրդական ինքնավարության հարցն ընդամենը Իրաքի մասնատման վաշինգտոնյան ծրագրի բաղադրիչ մասն է: Քանի դեռ Իրաքին մասնատման սպառնալիքի տակ պահելը կհամապատասխանի ԱՄՆ շահերին, ինքնավարության հարցը կմնա օրակարգում: Երբ ուշադիր հետեւելու լինենք իրադարձությունների զարգացմանը շրջանում, դժվար չի լինի կռահել, որ մասնատման սպառնալիքի փաթաթումն Իրաքի վզին շատ ավելի նախընտրելի է ԱՄՆ-ի համար, քան այդ պետության փաստացի մասնատումը: Հենց այդ սպառնալիքի շնորհիվ է, որ Վաշինգտոնը կաթվածահար վիճակում է պահում Բաղդադի վարչակարգին: Ինչ խոսք, սպառնալիքի վերացման անհրաժեշտությունը կհանգեցնի հյուսիսային Իրաքում քրդական ինքնավարության գաղափարի վերացմանը, եւ կարծում ենք, [illegible] կայսրությունը մի ամբողջ ժողովրդի զգացմունքների հետ խաղալու համար արդարանալու միջոցներ անպայման կգտնի:

Համենայն դեպս, կողմերի միջեւ ձեռք բերվեց զինադադարի համաձայնություն: Սակայն թուրքական իշխանությունների ու PKK-ի միջեւ այս տարվա մարտի 20-ին հայտարարված զինադադարը խախտվեց ընդամենը 4 օր հետո: Մարտի 24-ին քուրդ մարտիկների զինված գործողությունների հետեւանքով Բինգյոլի մոտակայքում սպանվեցին թուրքական բանակի շուրջ 40 զինծառայողներ: Հաջորդ օրն իսկ, մարտի 25-ին, հանդես գալով Բեյրութում PKK-ի առաջնորդ Աբդուլլահ Օջալանը զինադադարի պահպանման համար թուրքական իշխանություններին ներկայացրեց հետեւյալ պահանջները. վերացնել արտակարգ դրությունը Թուրքիայի հարավարեւելյան շրջաններում, ճանաչել քրդերի իրողությունը, դադարեցնել բանակի պատժիչ գործողությունները քուրդ ազգաբնակչության դեմ, վերջ տալ խոշտանգումներին եւ ազատ արձակել PKK-ի բանտարկված անդամներին: Զինադադարի խախտումը թուրք հրապարակախոսներից մեկը պատճառաբանում է նրանով, որ իշխանությունները PKK-ին ավելին են խոստացել, քան կատարել են: Մինչդեռ Թուրքիան պատրաստ է միայն ներում շնորհել PKK-ի այն անդամներին, ընդ որում մասնակի, որոնք անմիջականորեն չեն մասնակցել զինված պայքարին: Ինչ վերաբերում է արտակարգ դրությանը, ապա թուրքական կառավարության վերջին որոշմամբ այն նորից երկարաձգվեց:

Դժվար է կանխագուշակել, ժամանակն ինչ անակնկալներ կմատուցի: Թեեւ զինված պայքարի միջոցով Թուրքիայի դեմ հաղթանակ հասնելու PKK-ի հնարավորությունները խիստ սահմանափակ են, սակայն առանց քրդական հարցի լուծման, որ արդեն երկրի տարածքային ամբողջականության համար սպառնալիք է, Թուրքիան չի կարող պահպանել իր առանցքային տեղն ու դերը Միջին Արեւելքում: Թուրքիայի պետական իշխանությունների ու երկրի քուրդ ազգաբնակչության միջեւ անջրպետն այնքան է խորացել, որ PKK-ի ֆիզիկական ոչնչացումը հազիվ թե մարի հետզհետե ծավալվող քրդական շարժումը երկրում:

ՅԱԿՈԲ ԶԱՔԱՐՅԱՆ

Հայացք

Թաքցնե՞լ, թե ծածկել մերկությունը

Գրելով «թագավորը մերկ է», գիտե՞ր արդյոք մեծ դանիացին, որ դա հետագայում դառնալու է մարգարեական, վերածվելու քաղաքական յուրահատուկ չափանմուշի՝ պատմության յուրաքանչյուր ժամանակահատվածում առանձնակի դրսեւորումներով ու հետեւանքներով: Սակայն «թագավորի մերկությունը» հայտնի էր թերեւս ոչ միայն նրան:

«Թագավորի մերկությունն» ավելի ակնառու ու ցայտուն է դառնում նրա երկրում կատարվող քաղաքական ու տնտեսական փոփոխությունների ժամանակ՝ կախված դրանց իրականացման ձեւից ու արդյունքներից: Եւ այդ դեպքում թագավորին այլ բան չի մնում, քան ձեռնամուխ լինել որոշակի քայլերի, քանզի միայն դրանցից հետո կարելի է որոշել, թե որքանով է սպառնալից թագավորի մերկությունն իր երկրի համար:

Կատարված եւ կատարվող իրադարձությունները հենց թեկուզ մեր «եղբայրական» հանրապետություններում մեզ են ներկայացնում թագավորի մերկության խնդրի այլազան լուծումներ: Վրաստանում, օրինակ, Զվիադ Գամսախուրդիան իր «գահակալության» ընթացքում, թերեւս ավելի շատ սեփական ինքնավստահությունից, քան թե ընդդիմադիրների ահագնացող ճնշումից, փորձ արեց կիրառել «մերկության» խնդրի լուծման ուժային տարբերակը: Հեռու մնալով տնտեսական ու քաղաքական որեւէ լուրջ ու նշանակալից փոփոխությունների միջոցով «մերկությունը» ծածկելուց, նա ամբողջ ուժով սկսեց փակել իր մերկության մասին աղաղակողների ու այն վերհանողների բերանը, ինչը եւ նրան «հնարավորություն» տվեց նախագահություն անել վտարանդիության մեջ:

Տաջիկստանում Ռահմոն Նաբիեւը ժամանակին ոչ մի քայլ չարեց փրկելու իրեն առնվազն «մերկացումից»: Իսկ երբ ընդդիմադիրների սպառնալից ճնշման տակ այնուամենայնիվ փորձեց ինչ-որ բան ձեռնարկել, արդեն ուշացած էր եւ լրիվ «մերկացած» հայտնվեց խաղից ու ասպարեզից դուրս:

Ռուսաստանում Բորիս Ելցինն այսօր ձգտում է իր «մերկության» հարցը լուծել միաժամանակ երկու ձեւով. մի կողմից, փակում է «թագավորը մերկ է» բացականչողների բերանը, մյուս կողմից, կտրուկ տնտեսական ու քաղաքական փոփոխություններ է գնում՝ փորձելով նաեւ այս կերպ ծածկել իր «մերկությունը»:

Հայաստանում ընթացող (?) կյանքն ու իրադարձությունները վկայում են, որ «մերկությունը» ծածկելու հայկական տարբերակն առանձնահատուկ բնույթի է:

Ընդհանրապես, թագավորի ամենաուժեղ եւ ապահով զենքը նրա երկրի ու ժողովրդի համակողմանի ամրությունն ու կայունությունն է: Եւ երբ այդ վիճակն ինչ-որ ձեւով խախտվում, խաթարվում է, ապա թագավորը մնում է անզեն ու կամ ամբողջովին մերկ, կամ էլ ցնցոտիների մեջ: Սրան հետեւող քայլերը պետք է ուղղված լինեն ոչ միայն սեփական անվան ու անձի փրկությանը, այլ նաեւ ժողովրդի ու երկրի, որովհետեւ միայն այդ ձեւով կարելի է ծածկել կամ գոնե ակնահաճո դարձնել «մերկությունը»: Հայաստանի ներկա իրավիճակը թույլ է տալիս ասել, որ մերկությունը ծածկելուն ուղղված շատ համեստ ու անհաստատ միջոցառումները չեն կարող նպաստել դրան: Հասարակության սոցիալական ու քաղաքական շերտավորումները դրա գրավականը հանդիսանալու երաշխիք չեն տալիս:

Մինչայժմյան «հասարակարգի» ու վարչակարգի օրոք եւս գոյություն ունեցող, այն ժամանակ ավելի շատ ընդհատակյա հասարակական սոցիալական շերտավորումը ներկայումս ավելի ցայտուն է դարձել:

Եւ չնայած որ այժմյան «գերապահով» խավը հիմնականում ներկա իշխանությունների կամա թե ակամա ջանքերի շնորհիվ է այդ բարձունքին հասել, այնուամենայնիվ թագավորը չի կարող նրա վրա հենվելով իր մերկությունը ծածկելու ջանք թափել, քանի որ պատեհ առիթի դեպքում վերոհիշյալ խավը եւս կձայնակցի «թագավորը մերկ է» գոռացողներին: Հասարակության միջին խավը եւս, ելնելով երկրի հեղհեղուկ դրությունից եւ իր երերուն վիճակից, նույնպես «մերկությունը ծածկելու» միջոց չէ: Անապահով շերտը սոցիալ-տնտեսական փոխակերպումներից ամենալուրջ ազդեցությունն ու վնասը կրելով, բնականաբար ամենալուրջ ուժն է դառնում մերկությունը ծածկելուն ուղղված ոստոստող ու անկանոն շարժումների դեմ: Սա թերեւս օրինաչափություն կարելի է համարել, որովհետեւ նախապատրաստված, իրականացվող ամեն մի փոփոխություն առաջին հերթին պետք է ուղղված լինի նրանց վիճակի բարելավմանը, քանի որ սոցիալական ամենափոքր պայթյունն իսկ կարող է ի չիք դարձնել թագավորի ջանքերը, հօդս ցնդեցնել նրա հույսերը, իսկ վերջին պահին, իբրեւ այս ամենի արդյունք եւ հետեւանք՝ նաեւ հենց թագավորին:

Մինչդեռ հանրապետությունում կատարվող ամեն մի փոփոխություն, անցկացվող ամեն միջոցառում, ցանկանում ենք, թե ոչ դրա իրականացնողները, գերապահովներին տանում է դեպի գերագույն ապահովություն, անապահովներին պարգեւում է եւս մի հարված: Նման իրավիճակները թագավորի մերկությունը դարձնում են աչք ծակող ու խարանող, իսկ նրա ջանքերը ոչ թե մերկությունը ծածկելուն, այլ այն թաքցնել փորձելուն ուղղված: Բայց երբ որեւէ բան փորձում ես թաքցնել, այլ ոչ թե այն բարվոքել, այս դեպքում հնարավոր է, ո ըմբռնումը դադարի կանխարգելիչ ու որոշիչ դեր խաղալ:

Հասարակության քաղաքական շերտավորումը եւս թագավորի համար նպաստավոր պայմաններ չի ստեղծում: Միակ հուսալի աներեր հենարանը, որի միջոցով էլ թագավորն իր մերկությունը թաքցնելու ձեւեր է կիրառում, նրա նախընտրյալ եւ նրան նախընտրող կուսակցությունն է: Սակայն դա այն պատվար հիմքը չէ, որի վրա հենվելով նա կարող է բարենպաստ վիճակ ստեղծել: Որովհետեւ այդ կուսակցությանը չպաշտպանողների, չհամակրողների մի ստվար կազմի համար նրա մերկությունն այլեւս ոչ մի կերպ հնարավոր չէ ծածկել, իսկ դրան ուղղված քայլերը ցնցոտիներին կարկատան ավելացնելու տպավորություն են ստեղծում: Թագավորն առայժմ իր շքախմբով անշտապ քայլեր է անում իր մերկությունը ցուցադրողներին սաստելու համար, ըստ երեւույթին, հակված լինելով իր քայլերի մեջ տեսնել ավելի շատ ոչ թե արդյունք, այլ թագավորների սովորությանը հետեւելու ձեւ: Եւ գուցե մերկությունը թաքցնելու այս միջոցը նրան երբ ոչ օգնի, ապա շատ մեծ վնաս էլ միաժամանակ չբերի: Սակայն ժամանակն իր սրությամբ ստիպում է մտածել, որ բավական ուշ է մերկ չերեւալու փորձեր անելը, մանավանդ որ այդ փորձերը վերածվում են փորձարկումների:

ԳԱԳԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Դիմանկար

ՉԵՉՆԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՄԵՆԱՎՏԱՆԳԱՎՈՐ ԹՇՆԱՄԻՆ

Ինչ էլ որ հայտարարելու լինի Ջոհար Դուդաեւը, նա այսօր այնքան չի վախենում Ռուսլան Խասբուլատովից կամ ռուսական գեներալներից, որքան իր նախկին զինակից, Չեչնիայի այսօրվա ընդդիմության ղեկավար, 40-ամյա Յարաղի Մամոդաեւից:

Մամոդաեւը սերում է չեչենական ամենահեղինակավոր եւ ամենամեծ չինխո ցեղից: Ստանալով ինժեների եւ տնտեսագետի բարձրագույն կրթություն, Մամոդաեւը ծառայողական աստիճանով բարձրանալով, 29 տարեկանում դառնում է «Վոլգոգրադնեֆտեգազստրոյ» տրեստի կառավարիչ: Անսահման աշխատունակ եւ փառասեր չեչենի օրոք տրեստն իր գոյության ընթացքում առաջին անգամ ազատվում է պարտքերից: Այդ «աշխատանքային հաղթանակի», ինչպես նաեւ ցուցաբերած ավելորդ նախաձեռնության համար Վոլգոգրադի կոմկուսի մարզկոմը Մամոդաեւին խիստ նկատողություն է հայտարարում: Նրա կարիերան շարունակվում է «Թուրքմեննեֆտեգազստրոյ» տրեստի կառավարչի պաշտոնում:

1989 թ. «Չեչենինգուշստրոյի» տասը հազարանոց կոլեկտիվը Մամոդաեւին ընտրում է կառավարիչ: Չցանկանալով հակամարտության մեջ մտնել հանրապետության ղեկավարության հետ, որն այս պաշտոնը վաճառում էր աստղաբաշխական գումարներով, Մամոդաեւը հրաժարվում է առաջարկված պաշտոնից եւ զբաղվում կոմերցիայով: Մեկուկես տարվա ընթացքում նա ստեղծում է բազմաճյուղ միավորում՝ գիտական, արտադրական, արտաքին առեւտրի ձեռնարկություններով: Այդ ժամանակ էլ Մամոդաեւի համար պարզ է դառնում, որ քանի դեռ հանրապետությունը ղեկավարվում է Մոսկվայի թելադրանքով, մի խումբ կաշառված անձանց կողմից, ինքն իրեն ամբողջությամբ չի կարող դրսեւորել: Իր իսկ խոսքերով, «իմ մուտքը քաղաքականություն ճակատագրական է եղել»:

Մամոդաեւը Դուդաեւի հետ ծանոթացել է 1990 թ., երբ գեներալն արձակուրդի եկել էր Գրոզնի: Նրանք մոտ էին տարիքով՝ 40 եւ 49 տարեկան, երկուսն էլ հաջողության էին հասել Ռուսաստանում, երկուսն էլ մոլի մահմեդականներ: Այն ժամանակ Մամոդաեւն էր, որ չեչեն ժողովրդի համազգային կոնգրեսին առաջարկեց ղեկավար ընտրել «Աֆղանստանի հերոս», «Չեչնիայի հպարտություն» գեներալ Դուդաեւին:

Գեներալի ուսադիրներով մարտիկը չէր կարող դուր չգալ չեչեններին: Սակայն Դուդաեւը նախագահ դարձավ Մամոդաեւի շնորհիվ: 1991 թ. սեպտեմբերին, Չեչնիայի հեղափոխության օրերին նա իր հաշվին կերակրում էր հանրահավաքի մասնակիցներին, նրա մարդիկ կարգ ու կանոն էին պահպանում հրապարակում, նրա շնորհիվ աշխատում էր Գրոզնու տրանսպորտը, ավտոբուսները նորանոր «հեղափոխականների» էին հասցնում դեպքի վայր: Մամոդաեւի օֆիսը վերածվել էր ապստամբության շտաբի: Հանրահավաքում ընտրված կամ ինքնակոչ ղեկավարներն այստեղ էին հավաքվում խորհրդակցության:

Գործարար Մամոդաեւի համար կոմունիստական ռեժիմի տապալումն առաջին հերթին նշանակում էր ավելորդ կապանքների վերացում, իսկ ռազմական օդաչու Դուդաեւը հաղթանակն ընկալեց քիչ այլ կերպ:

«Հանուն ազատության ես պատրաստ եմ զոհել չեչենների կեսին»: Համազգային ինքնազոհաբերման այս նախագահական ծրագիրն ի դերեւ արեց քիչ թե շատ մտածող բոլոր չեչենների հույսերը, որոնք մինչ այդ էլ արդեն անհանգստության նշաններ էին ցույց տալիս Դուդաեւի օրումեջ հնչող խումհարային հայտարարություններից:



«1992 թ. նոյեմբերին Ռուսաստանի հետ պատերազմից մենք մազաչափ էինք հեռու, — ասում է Յարաղի Մամոդաեւը, — երբ Դուդաեւն իր պահակախմբով Ասմինովսկի ստանիցայում զինաթափ էր արել մի ռուս զինվորների եւ սպառնում էր նրանց տեղում գնդակահարել: Դուդաեւը գիտեր, որ ես որպես փոխվարչապետ քիչ առաջ այլ պաշտոնատար անձանց մասնակցությամբ Վլադիկավկազում Գայդարի հետ զորքերը ետ քաշելու համաձայնագիր եմ կնքել: Չնայած դրան, նա շրջում էր սահմանի ողջ երկայնքով, եւ չեչեններին ռուսների դեմ սրբազան պատերազմի կոչեր էր անում»:

Որպես Դուդաեւի գործողությունների պատասխան՝ ռուսական զորամասի հրամանատարը գերի է վերցնում Գրոզնի վերադարձող Մամոդաեւին եւ չեչենական պատվիրակությանը: Ռուս զինվորները գլխավերեւում կրակելով, ամբողջ պատվիրակությանը ստիպում են պառկել գետնին: Կանգնած է մնում միայն Մամոդաեւը: Նրա անձնական քարտուղար Շեդա Գադաեւի խոսքերով, «միայն նրա տոկունության շնորհիվ հաջողվեց խուսափել արյունահեղությունից»:

Մամոդաեւի կարծիքով, Դուդաեւի ամենամեծ սխալը կոշտ հակառուսական, երբեմն նույնիսկ ռուսատյաց դիրքորոշումն է:

Դրանից բացի, նրա խոսքերով, «նախագահը գիտակցաբար խոչընդոտում է այն ամենին, ինչը կարող է հանրապետությունը ոտքի կանգնեցնել, դարձնել ժողովրդավարական, իրավական պետություն: Նա հատկապես խոչընդոտում է ազգային հարստությունների (որի 95 տոկոսը կազմում է նավթամթերքը) բաշխման հսկողությանն ուղղված նորմատիվ ակտերին: Նախարարների կաբինետի ընդունած մոտ հազար նման որոշումներ նախագահի կողմից կասեցվել են հանդիպակաց հրամանագրերով»:

Նախագահի հրամանագրերից մեկով, նավթամթերքի բաշխման եւ արտահանման թույլտվության իրավունքը տրվում է իր ամենամոտ ընկերներին եւ բարեկամներին: Մամոդաեւի անունն այդ ցուցակում չկա: Նա պնդում է, որ Դուդաեւն անձամբ շահագրգռված է դրանում: Նրա տվյալներով, մոտ մեկ միլիարդ դոլլարի նավթամթերքի վաճառքից անցյալ տարի Չեչնիայի պետական գանձարան է մտել միայն հինգ տոկոսը: Մնացածը բաժանվել է Դուդաեւի եւ իր բարեկամների միջեւ:

Գրոզնիում նախագահի եւ ընդդիմության հակամարտության արդյունքները հայտնի են. ավելի քան 50 սպանված, հարյուրից ավելի վիրավորներ, բազմաթիվ ձերբակալություններ, հայտարարվել է արյան վրեժ, այդ թվում Դուդաեւին...

Ընդդիմության ղեկավարներն ստիպված էին անցնել ընդհատակ:

«Մոսկովսկիե նովոստի» շաբաթաթերթի թղթակիցը, որն օրերս Մոսկվայում հանդիպել է Մամոդաեւին, գրում է. «Մոսկովյան նեղլիկ բնակարանում այցելուներին դիմավորում են ամրակազմ, մոյսացող երիտասարդներ՝ Մամոդաեւի թիկնապահները: Այստեղ էլ, Ռուսաստանի մայրաքաղաքում նա վախենում է նախկին ընկերոջ եւ զինակցի սադրանքներից: Չեչնիայում այդպիսի գործողությունները կարող են շուռ գալ հենց իր՝ Դուդաեւի դեմ, որը հասկանում է, թե ով ով է տեղական հիերարխիայում: Այդ պատճառով էլ, Մամոդաեւի համոզմամբ, իր ընտանիքը (կինն ու երեք որդիները) Գրոզնիում անվտանգ ու ապահով են: «Իսկ եթե Դուդաեւը փորձի ձեզ ձերբակալե՞լ»: «Թող միայն փորձի...»:

Մամոդաեւը Մոսկվայում բավականին հաջող բանակցություններ է անցկացրել Ռուսաստանի մի շարք ղեկավարների հետ: Փոխվարչապետ Շախրայը խոստացել է միլիարդ ռուբլի հատկացնել սողանքների հետեւանքները վերացնելու: Ռուսաստանի ԳԽ փոխնախագահ Վորոնինի եւ կենտրոնական բանկի կառավարիչ Գերաշչենկոյի հետ հանդիպման ժամանակ հաջողվեց համաձայնության գալ, որպեսզի Չեչնիայում նորից աշխատի Ռուսաստանի բանկի մասնաճյուղը: Նշանակում է, կվերանա կանխիկ ռուբլու դեֆիցիտը, մարդիկ աշխատավարձ ու թոշակ կստանան (մեկ տարուց ավել Չեչնիայում կենսաթոշակներ չեն տվել):

Իհարկե, Դուդաեւը, որը բանակցությունները ձախողելով փորձում էր վարկաբեկել Մամոդաեւին՝ նրան հայտարարելով «պետական հանցագործ», կփորձի Ռուսաստանից ստացվող բարիքները ներկայացնել որպես Մամոդաեւի կողմից Չեչնիայի անկախության դավաճանություն: Նախկինում Ռուսաստանի հետ երկկողմանի հարաբերությունների Մամոդաեւի ծրագիրը, որը Չեչնիան կարող էր կայունացնել դեռեւս կես տարի առաջ, հենց այդպես ներկայացվեց ժողովրդին:

Ինքը՝ Մամոդաեւն ամուր է իր դիրքորոշման մեջ. «Չեչնիան Ռուսաստանի մեջ չէ, բայց կողքին է»: Ինչ վերաբերում է Մոսկվայի հետ երկկողմանի կապերին, նա 90 տոկոսով կիսում է ռուսական տեսակետը: Նա կարծում է, որ պետք է անհապաղ օրինականացնել այն կետերը, որոնց կապակցությամբ կա փոխհամաձայնություն, իսկ մնացած տասը տոկոսը կարելի է թողնել «ավելի լավ ժամանակներին, երբ մեզ էլ, ձեզ էլ կդադարեն խանգարել»:

Ըստ ռուսական մամուլի պատրաստեց
ԳԵՎՈՐԳ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԸ

Լուրերի Հոսք

Շեւարդնաձեն հազիվ է փրկվել

Ասոշիեյթըդ պրես գործակալությունը Թբիլիսիից հաղորդեց, թե Էդուարդ Շեւարդնաձեն կիրակի օրը հազիվ է փրկվել արկի պայթյունից Շրոմս գյուղի մոտակայքում: Այն պահին, երբ նրա եւ ուղեկցող 3 մեքենաներն անցել են գյուղի մոտով, աբխազական կողմից թնդանոթային կրակ է բացվել նրա ուղղությամբ: Արկերից մեկը ուղիղ հարվածել է վրացական հրասայլին, բեկորն ընկել է Շեւարդնաձեից, որին աբխազական բանակում անվանում են «սպիտակ գլուխ», ընդամենը մի քանի սանտիմետր այն կողմ: Վրացական ռադիոն նույն գիշեր ձայնասփռել է աբխազական բանակի ռադիոկապի ձայնագրությունը՝ «Սպիտակ գլուխը տարածքում է. վագոններ ուղարկեք դրան»: Վրաստանի ղեկավարի զինվորական օգնականներից Վլադիմիր Չիխովանին Ասոշիեյթըդ պրեսին հաղորդել է, որ թեեւ Շեւարդնաձեին ոչինչ չի պատահել, սակայն աբխազական 6 ուղղաթիռներից եւ երկու Սու-25-երի կրակից հողին է հավասարվել Շրոմս գյուղը:

Առեւտրի խտրականության վերացում

Մոսկվան մտադիր է հասնել այն բանին, որ արտաքին առեւտրում վերացվի խտրականությունը եւ ռուսաստանցի արտահանողների համար առավել մատչելի դառնան տեխնոլոգիայի ու հումքի համաշխարհային շուկաները: Ինչպես երկուշաբթի օրը Մոսկվայում կայացած մամուլի ասուլիսում հայտարարեց փոխվարչապետ, ֆինանսների նախարար Բորիս Ֆյոդորովը, Ելցինը Տոկիոյում այդ հարցը սուր կդնի: Հուլիսի 7-ին բացվող յոթ արդյունաբերական երկրների ղեկավարների հանդիպման ժամանակ Ռուսաստանը նաեւ հույս ունի ստանալ համակարգված վարկի երկրորդ մասը (1,5 մլրդ դոլլար), պահեստային վարկ եւ ստեղծել սեփականաշնորհմանն աջակցող 2-4 մլրդ դոլլարանոց հիմնադրամ: Բ. Ֆյոդորովը նշեց, որ ռուբլու փոխարժեքը դոլլարի նկատմամբ կայուն մակարդակով կպահպանվի «առնվազն մինչեւ աշնան սկիզբը» (մոտ 1100 ռուբլի):

Ելցինն արգելեց խորհրդարան կանչել բարձրաստիճան սպաներին

Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինը արգելեց առանց իր գիտության խորհրդարան կանչել այն զինծառայողներին, որոնք բարձրաստիճան սպաների պաշտոնների թեկնածուներ են: Նախագահի մամուլի ծառայությունից ԻՖ-ի ստացած կարգադրության մեջ ընդգծվում է, որ զրույցի համար Գերագույն խորհրդի կոմիտեներ կանչելը պետք է իրականացվի միայն Ռուսաստանի նախագահի՝ զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի համաձայնությամբ: Այս որոշումը պատճառաբանվում է նրանով, որ նման կանչերը հանգեցնում են «չնախատեսված եւ չարդարացված ֆինանսական ծախսերի, վնասում է զորքերի ու նավատորմի ղեկավարմանը»: ԻՖ

Ղազախները ձգտում են ռուսների հետ համադաշնության

Ղազախստանի ժողովրդական կոնգրես կուսակցության ակտիվը Ալմա Աթայում երկուշաբթի օրը կայացած նիստում հավանություն տվեց կուսակցության ղեկավար Օլժաս Սուլեյմենովի այն առաջարկությանը, որ ստեղծվի ռուս-ղազախական համադաշնություն: Ավելի վաղ կուսակցության պլենումում Սուլեյմենովի հանդես բերած նախաձեռնությամբ նախատեսվում է ստեղծել երկու պետությունների միություն ընդհանուր բանկով, հարկային, ֆինանսական եւ վարկային միասնական քաղաքականությամբ: Երեքշաբթի օրը Ղազախստանի ժողովրդական կոնգրես կուսակցությունն այդ խնդրի քննարկումը կուսակցությունների եւ հասարակական միավորումների «կլոր սեղանի» հերթական նիստում շարունակելու առաջարկություն արեց: ԻՖ

Ֆինանսներ

Յոթնյակի հանդիպման նախօրեին

«Ասահի» թերթը գրում է. Հուլիսի 7-ին Տոկիոյում բացվող Արեւմուտքի զարգացած արդյունաբերություն ունեցող յոթ առաջատար երկրների ղեկավարների հանդիպման նախօրեին, որտեղ օրակարգի հիմնական հարցերից մեկը կլինի Ռուսաստանին աջակցելու հարցերի քննարկումը, Յոթնյակի անդամները եւ համաշխարհային բանկը համաձայնության հասան Ռուսաստանին 2 մլրդ դոլլար հատկացնելու շուրջ: Առաջիկա մեկուկես տարում հատկացվելիք այդ միջոցները նախատեսվում է օգտագործել պետական խոշոր ձեռնարկությունների կազմալուծմանը եւ սեփականաշնորհման իրականացմանը օգնելու նպատակով: Յոթնյակի անդամ երկրները նախապես ուսումնասիրել էին այդ նպատակով ֆինանսական հիմնադրամի ստեղծման հնարավորությունը, բայց այնուհետեւ որոշեցին հրաժարվել այդ մտքից եւ օգնությունը տրամադրել «սեփականաշնորհման եւ վերակազմակերպման ծրագրի» շրջանակներում: Ենթադրվում է Ռուսաստանին աջակցել այնպիսի ուղղություններով, ինչպիսիք են սեփականաշնորհվող ձեռնարկությունների աշխատակիցների մասնագիտական վերապատրաստմանն ուղղված տեխնիկական օգնությունը եւ վարչակառավարչական կադրերի վերապատրաստումը, ձեռնարկությունների կառուցվածքային վերակառուցմանն օգնելը, ինչպես նաեւ աջակցությունը քաղաքային եւ տեղական վարչակազմերին:

Բրիտանական ITN հեռուստաընկերությունը հեռարձակեց ԱՄՆ նախագահ Բիլ Քլինթոնի հետ ունեցած բացառիկ հարցազրույցը, որտեղ նա անդրադարձել էր մի շարք միջազգային հիմնահարցերի: Մեկնաբանելով աշխարհի արդյունաբերապես զարգացած յոթ առաջատար երկրների պետությունների ու կառավարությունների Տոկիոյի առաջիկա հանդիպումը, Քլինթոնը հույս հայտնեց, որ այնտեղ կարծիքների անկեղծ փոխանակում տեղի կունենա համաշխարհային տնտեսության ճգնաժամի հաղթահարման խնդիրների շուրջ եւ ուղիներ կգտնվեն ԱՄՆ-ի, Ճապոնիայի եւ Եվրոպական երկրների միջեւ միջազգային առեւտրի շուրջ գոյություն ունեցող տարաձայնությունների հաղթահարման համար:

Քլինթոնը Յոթնյակի երկրների մամուլի ներկայացուցիչներին տված հարցազրույցում անդրադառնալով տնտեսական բարեփոխում իրականացնելիս Ռուսաստանին Արեւմուտքի աջակցության հարցին ասաց. «Ես հայտարարել եմ Ռուսաստանին 1-6 մլրդ դոլլարի օգնություն ցույց տալու մասին եւ մենք, ի դեպ, արդեն պատրաստվել ենք հատկացնել այդ գումարի կեսից ավելին: Այնուհետեւ ես հայտարարեցի Ռուսաստանին 1,8 մլրդ դոլլար օգնություն հատկացնելու մեկ ուրիշ երկկողմ պայմանավորվածության մասին, որը ներկայացուցիչների պալատում ստացավ 2 կուսակցությունների հավանությունը: Այժմ այն պետք է արագորեն ընդունվի սենատում»: Քլինթոնը նշեց, որ միջազգային վալյուտային հիմնադրամը որոշում է ընդունել Ռուսաստանին 1-5 մլրդ դոլլարի վարկ հատկացնելու մասին: «Մենք մտադիր ենք դա քննարկել Յոթնյակի հանդիպման ժամանակ, — ասաց նախագահը: — Կարծում եմ, որ Ռուսաստանը հնարավոր վիթխարի շուկա է ամենքիս համար եւ խոշորագույն քաղաքական հիմնահարց»:

ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՌ-ՏԱՍՍ

Լուրերի հոսք

Անվտանգության խորհուրդը քննարկում է Աբխազիայում ստեղծված իրավիճակը

Այսօր ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը քննարկում է Աբխազիայում ստեղծված իրավիճակը: Ինչպես Նյու Յորքից հաղորդեց ԱՄՆ-ում Վրաստանի դեսպան եւ միեւնույն ժամանակ ՄԱԿ-ում հանրապետության ներկայացուցիչ Պետրե Չխեիձեն, Անվտանգության խորհրդին հղած իր ուղերձում ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալին համաձայնել է հակամարտության գոտի ուղարկել 50 դիտորդի: Մինչդեռ հայտնի է, որ Աբխազիայի Գերագույն խորհրդի նախագահ Վլադիսլավ Արձինբան ավելի վաղ հայտարարել է, որ թույլ չի տա դիտորդների ներկայությունը աբխազների կողմից վերահսկվող տարածքում: Ինչ վերաբերում է Շեւարդնաձեին, ապա հուլիսի 5-ի իր հեռուստաելույթում նա հայտարարել է, որ Վրաստանը պատրաստ է ստեղծել բոլոր պայմանները դիտորդների նորմալ աշխատանքի համար, երբ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը ընդունի նման որոշում: Սնարք

Ելցինն առաջարկում է կասեցնել որոշումը

Ռուսաստանի Նախագահ Բորիս Ելցինը գտնում է, որ Ուրալի Հանրապետություն հռչակելու մասին Սվերդլովսկի մարզխորհրդի որոշումը «վաղաժամ է», եւ առաջարկում է կասեցնել այն մինչեւ սահմանադրական խորհրդակցության հետագա փուլերը: Նախագահի մամուլի քարտուղար Վյաչեսլավ Կոստիկովի կողմից երեկ հրապարակված հայտարարության մեջ նշվում է, որ այդ եղանակով մարզի իրավական կարգավիճակը շտկելու մտադրությունը «չի կարող տեղի ունենալ Դաշնության մեկ կամ մի քանի սուբյեկտների ցանկությամբ»: Մի շարք հանրապետությունների ղեկավարներ «համառորեն ձգտում են ընդլայնել հանրապետությունների կարգավիճակը, ինչը, ըստ երեւույթին, նշանակում է կոնֆեդերատիվ հարաբերությունների հաստատում», նշվում է Վյաչեսլավ Կոստիկովի հայտարարության մեջ: ԻՏ

Ռուսաստանում հնարավոր է հակահրեականության ալիք

Սեպտեմբերին Ռուսաստանում կարող է հակահրեականության ալիք բարձրանալ, ԻՏ-ին տված հարցազրույցում հայտարարեց Ռուսական կուսակցության նախագահ Վիկտոր Կորչագինը: Նրա կարծիքով, դա բնական արձագանք կլինի ազգային երկպառակության քարոզչության մեղադրանքով ռուսական թերթերի խմբագիրների մի շարք դատավարությունների կապակցությամբ: Մասնավորապես, սեպտեմբերին Մոսկվայի քաղաքային դատարանը պետք է քննի Ռուսաստանի գլխավոր դատախազության կողմից հենց Կորչագինի դեմ հարուցված քրեական գործը: Նա Ռուսական կուսակցության «Ռուսական վերածնունդի» թերթի խմբագիրն է: Ըստ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի, Կորչագինին մեղադրում են ազգային եւ ցեղային իրավահավասարության խախտման մեջ: Վ. Կորչագինը հայտնեց, որ իր տեղեկությունների համաձայն, ամբողջ Ռուսաստանում քրեական գործեր են հարուցվել ազգայնական 13 թերթերի դեմ, որոնցից են «Ռուսսկոե դելոն», «Վոլյա Ռոսիին», «Ռուսսկոե վոսկրեսենիեն» եւ այլն: Ռուսական կուսակցությունը մտադիր է սեպտեմբերի սկզբներին մի շարք համառուսաստանյան ձեռնարկումներ կազմակերպել «Ռուսներին՝ ռուսական պետություն», «Ձեռքներդ հեռու ռուս խմբագիրներից», «Կորչեն սիոնիստները» կարգախոսներով: ԻՏ

ԱՊՀ երկրները համակարգում են արտաքին քաղաքականությունը

Հուլիսի 6-ին Մինսկում տեղի ունեցավ փորձագետների առաջին խորհրդակցությունը, որի ժամանակ քննարկվեց ԱՊՀ անդամ պետությունների արտաքին գործերի նախարարների խորհրդի մասին Ռուսաստանի կողմից ներկայացված փաստաթղթի նախագիծը: Նման մարմնի ստեղծումը պայմանավորված է համագործակցության կանոնադրությամբ: Այն պետք է համակարգի արտաքին քաղաքական գործունեությունը: Սնարք

Մշակույթ

Առաջին մենահամերգը

Այդ օր՝ հունիսի 30-ին, Կամերային երաժշտության տանը կայացած համերգի ունկնդիրների մեջ գերակշռում էին փոքրիկները: Նրանք եկել էին լսելու իրենց 11-ամյա հասակակցի՝ ջութակահարուհի Մարինե Բլխյանի ելույթը: Վերջինիս մասին երաժշտական շրջանակներում սկսեցին լրջորեն խոսել հատկապես անցած տարվա նոյեմբերից հետո, երբ Երեւանի թիվ 21 երաժշտական դպրոցի 5-րդ դասարանի այս աշակերտուհին «Ամադեուս» մշակութային հիմնադրամի կազմակերպած պատանի երաժիշտների երեւանյան մրցույթում արժանացավ առաջին մրցանակի: Հիշում եմ, այն ժամանակ մեր զրույցում անվանի ջութակահար, ժյուրիի անդամ Ռուբեն Ահարոնյանն իր կրտսեր «գործընկերներից» առանձնացրեց հենց Մարինեին: Իհարկե, մինչ այդ՝ 9 տարեկանում, բնությունից օժտված այս երեխան արդեն հասցրել էր Ավետ Գաբրիելյանի անվան հանրապետական մրցույթում դարձյալ գրավել առաջին տեղը, բայց այն ժամանակ դա չունեցավ պատշաճ արձագանք:

Որ այդ հաջողությունները պատահական չէին, ակնառու երեւաց համերգում: Ներկայացված ծրագիրը, որ Մարինեն պատրաստել էր իր երիտասարդ շնորհալի ուսուցչի՝ Արմեն Հարությունյանի հետ, աչքի էր ընկնում վիրտուոզ բնույթի դժվարին ստեղծագործությունների ներգրավմամբ: 11 տարեկան երեխայի համար անչափ բարդ է այնպիսի ստեղծագործությունների կատարումը, ինչպիսիք են Մենդելսոնի Ջութակի կոնցերտը, Սարասատեի «Տարանտելլան» եւ Էդվարդ Միրզոյանի «Անընդհատ շարժումը»: Սակայն դա ամենեւին էլ չզգացվեց այս համերգի ընթացքում: Դա, անշուշտ, օրինաչափ եւ քրտնաջան աշխատանքի արդյունք էր: Հազվադեպ հնչող ստեղծագործություններից այդ օրը կատարվեց Բացինիի «Ռոնդոն», որ երեւան հանեց մեր փոքրիկ ջութակահարի կատարողական ողջ վարպետությունը: Թվում էր, թե նա գործիքից քամում է առավելագույնը, այն ամբողջովին ենթարկվում իրեն, երբ պետք է, հնչում է մեղմ ու հեզ, երբեմն էլ՝ ուժգին ու կրակոտ: Բոլոր առումներով այս առաջին մենահամերգը լուրջ հայտ էր ապագայի համար: Լավ հիշենք այս անունը. ջութակահարուհի Մարինե Բլխյան:

ԼԵՎՈՆ ԼԱԾԻԿՅԱՆ

Ցուցադրում էին շրջանավարտները

Արդեն ավանդույթ դարձած սովորության համաձայն, ամեն տարի Երեւանի գեղարվեստաթատերական ինստիտուտի կերպարվեստի բաժնի շրջանավարտների դիպլոմային աշխատանքների պաշտպանությունը կայանում է Հայաստանի նկարչի տանը: Այս տարի եւս չխախտվեց այդ ավանդույթը: Նախորդ շաբաթ տեղի ունեցավ հրապարակային պաշտպանությունը, ապա կազմակերպվեց արդեն գնահատված աշխատանքների ցուցահանդես, որը հավանաբար պայմանավորված ցուցասրահի վճարովի լինելու հանգամանքով, տեւեց ընդամենը երկու օր: Նախկինում նման ցուցահանդեսները պարտադիր այցելում էին կուսակցության եւ կառավարության ղեկավարները: Այս տարի, իհարկե, այդպես չեղավ: Այն անցավ հնարավորին չափ լուռ ու անշուք:

Բայց կարեւորն, անշուշտ, ներկայացված գործերի գեղարվեստական որակն է, որով եւս չէր փայլում այս տարվա ցուցադրանքը: Հատկապես մտահոգիչ էր գեղանկարչական աշխատանքների գեղագիտական մակարդակը: Դրանցում հաճախ չէր զգացվում ստեղծագործական անհատականության այն կնիքը, որ պարտադիր է ինքնուրույն կյանք մուտք գործող երիտասարդ արվեստագետների համար: Այսպես, Եղիազար Իսաբեկյանի գեղարվեստական ոճն ակնհայտ է նրա դասարանն ավարտած Անդրանիկ Սահակյանի յուղաներկ բնանկարներում: Դրանք հատկորոշվում էին վրձնի նշանավոր վարպետին բնորոշ անհանգիստ գույների բրբռուն խաղով: Հարկ է առանձնացնել Ուկրաինայից եկած Պոռն Իգորի «Պտղաբերություն» աշխատանքը (ղեկավար Անատոլի Պապյան) օգտագործված գույների ներդաշնակությամբ եւ կատարման ինքնատիպությամբ:

Առավել ուշագրավ էր ցուցահանդեսի գրաֆիկայի հատվածը: Մեր ուսանողները որպես կանոն ներկայացել էին ստեղծագործությունների շարքերով: Տպավորիչ էր, օրինակ, Արտավազդ Թալալյանի նկարաշարը՝ արված Վիլյամ Սարոյանի պատմվածքների մոտիվներով: Վահրամ Խաչիկյանի ու Ռուզաննա Շավոյանի գրաֆիկական թերթերում, անտարակույս, զգացվում էր արեւելքի շունչը. նա ներկայացրել էր «Հազար ու մի գիշեր» հեքիաթի նկարազարդումներ:

Խեցեգործության բաժնից պարտադիր պետք է հիշատակել Վերա Օհանյանի «Խաղը» կոմպոզիցիան:

Եւ վերջապես, [illegible] առաջարկված մտահղացումների [illegible]ությամբ առավել աչքի ընկնողը ինտերիերի բաժնի 16 շրջանավարտների ներկայացրած նախագծերն էին ու էսքիզները: Պատահական չէ, որ դրանցից 5-ը ինստիտուտի ղեկավարության կողմից երաշխավորվեցին ասպիրանտուրայի:

[illegible] զրույցում նույն ինստիտուտի կերպարվեստի ֆակուլտետի դեկան, քանդակագործ Գագիկ Ղազարյանն ասաց. «Չնայած ծանր ձմռան բացասական հետեւանքներին, մեր ուսանողները հիմնականում հաջողությամբ պաշտպանեցին իրենց դիպլոմային աշխատանքները»: Լ. Լ.

ԱԶԳ - ՄԱՐԶԱԿԱՆ

ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ՍԿԱՆԴԱԼՆ ԱՎԵԼԻ Է ԲՈՐԲՈՔՎՈՒՄ

Ֆուտբոլիստի կինն ավտովթարի ենթարկվեց

Հուլիսի 2-ի համարում «Ազգ» թերթն արդեն անդրադարձել է «Վալանսիեն»-«Օլիմպիկ» խաղից հետո ծագած ֆուտբոլային սկանդալին: Այս օրերին Ֆրանսիայի զանգվածային լրատվության միջոցները լայնորեն մեկնաբանում են խաղին հաջորդած իրադարձությունները: Մասնավորապես նշվում են հայտնի դարձած բազմաթիվ մանրամասներ: Ամեն ինչ սկսվեց այն բանից, երբ մայիսի 20-ին 0-1 հաշվով պարտված «Վալանսիենը» հենց մրցախաղից հետո խաղաթերթիկում մարսելցիների ղեկավարներից մեկին մեղադրեց կաշառակերության փորձի համար: «Վալանսիենի» պաշտպան Ժակ Գլասմանը պարզաբանեց, որ խաղից մի քանի ժամ առաջ իրեն զանգահարել է «Օլիմպիկի» խաղացողներից մեկը, որը, իր կարծիքով, Ժան-Ժակ Էյդելին էր: Նա լսափողը փոխանցել է ուրիշ խոսակցի, որը ներկայացել է որպես «Օլիմպիկի» ղեկավարներից մեկը: Այդ ղեկավարը Գլասմանին դրամ է առաջարկել, որպեսզի նա «շատ լավ չխաղա»: Մայիսի 23-ին Գլասմանը որոշ ճշգրտումներ մտցրեց. «Էյդելին սկզբում հեռախոսով զրուցեց իմ թիմակից Քրիստոֆ Ռոբերի հետ, ապա ցանկացավ խոսել ինձ հետ եւ ասաց. «Լսափողը փոխանցում եմ Ժան-Պիեռ Բեռնեին («Օլիմպիկի» գլխավոր տնօրենին)»: Վերջինս ինձ 200 հազար ֆրանկ առաջարկեց, որպեսզի ես մեծ եռանդով չխաղամ «Օլիմպիկի» դեմ: Գլասմանն ավելացրեց, որ այդ հեռախոսազրույցին Ռոբերից բացի ներկա է եղել նաեւ իր թիմակից, աշխարհի նախկին չեմպիոն, արգենտինացի Խորխե Բուռուչագան: Վերջինս այն ժամանակ մերժեց իր ներկայության փաստը, սակայն հունիսի 7-ին խոստովանեց, որ ինքն իրոք ներկա է եղել մայիսի 20-ի հեռախոսազրույցին, բայց դա մերժել է, որպեսզի Եվրոպայի չեմպիոնների գավաթի եզրափակիչից մի քանի օր առաջ սկանդալ չծագի: Ի դեպ, ֆուտբոլի ազգային լիգայի նախագահ Նոել Լը Գրաեն մայիսի 24-ին նույնպես հայտարարել էր, որ ինքն այդ գործով լրջորեն կզբաղվի եզրափակիչ խաղից հետո միայն: Մայիսի 26-ին Մյունխենում «Օլիմպիկը» դարձավ Եվրոպայի գավաթակիր: Ազգային լիգան երկու կոմիսարների հանձնարարեց զեկուցագիր կազմել «Վալանսիեն»-«Օլիմպիկ» գործի առթիվ: Մայիսի 29-ին մարսելցիներն իրենց դաշտում հաղթելով Պարի-Սեն-Ժերմենին (3:1), 5-րդ անգամ անընդմեջ դարձան Ֆրանսիայի չեմպիոն:

«Վալանսիենի» հարձակվող Քրիստոֆ Ռոբերը

Հունիսի 4-ին ֆուտբոլի ազգային լիգան հայտարարեց, որ բողոքարկելու է «Օլիմպիկի» գլխավոր տնօրենի գործողությունները: Ժան-Պիեռ Բեռնեն իր հերթին հայց ներկայացրեց, պնդելով, թե «Վալանսիենն» է իրենց կաշառք առաջարկել: Հունիսի 5-ին «Օլիմպիկի» նախագահ Բեռնար Տապին իր հերթին հայտարարեց, թե Վալանսիենի մարզադաշտ մտնելիս, բազմաթիվ ականատեսների ներկայությամբ հյուրընկալ թիմի ղեկավարներն իրեն առաջարկել են ոչ ոքի խաղալ: Հունիսի 24-ին Պերիգյո քաղաքում (Ֆրանսիայի հարավ-արեւմուտք) Քրիստոֆ Ռոբերի հայրական տան բակում հայտնաբերվեց 250 հազար ֆրանկ, որից հետո «Վալանսիենի» հարձակվողը ստիպված եղավ ամեն ինչ խոստովանել: Դրանից հետո Ռոբերին կալանքի վերցրին: Նույն օրը Բեռնար Տապին հայտարարեց, թե իրեն ոչինչ հայտնի չէ այդ գումարի մասին եւ թե մարսելցիները «հաղթելու համար մրցակցին կաշառելու կարիք չունեն»: Հունիսի 26-ին Լիլ քաղաքի ոստիկանները Կասիս ժամանեցին հարցաքննելու «Օլիմպիկի» գլխավոր տնօրեն Ժ. Պ. Բեռնեին, բայց պարզվեց, որ նույն գիշեր նրան տարել են հիվանդանոց: Սակայն նրա առողջական վիճակը տագնապի տեղիք չի տալիս: Նույն օրը վստահելի աղբյուրից պարզ դարձավ, որ մրցախաղի նախօրեին Վալանսիենում մարսելցիների իջեւանած «Նովոտել» հյուրանոցում առաջարկված 250 հազար ֆրանկը վերցնելու էր գնացել Ռոբերի կինը՝ Մարի-Քրիստին Ռոբերը: Ի դեպ, Վալանսիենի նույն հյուրանոցում ս. թ. ապրիլին իջեւանել էր Հայաստանի կանանց բասկետբոլի հավաքականը:

Հունիսի 26-ին «Օլիմպիկի» ֆինանսական ու վարչական տնօրեն Ալեն Լաոռը հայտարարեց, թե Ժ. Պ. Բեռնեն ֆինանսական որեւէ ինքնուրույնություն չունի եւ չէր կարող 250 հազար ֆրանկ վճարել առանց իր թույլտվության: Հունիսի 27-ին TF-1 հեռուստաընկերությանը տված հարցազրույցում Տապին իր հերթին հայտարարեց, թե «Օլիմպիկի» գանձարկղից ոչ մի ֆրանկ չի կարող դուրս բերվել առանց առնվազն չորս անձի գիտության:

Վալանսիենի արդարադատության պալատում, լրացուցիչ քննությունից հետո, Քրիստոֆ Ռոբերին պայմանական ազատություն տվեցին 50 հազար ֆրանկ երաշխավորության դիմաց: Նա լրագրողներին խոստովանեց, որ ինքը սխալ է գործել, ավելացնելով, որ դա արել է ավելի շատ հետաքրքրասիրությունից եւ տրված լինելով այն բանից, որ իրեն գնահատել եւ դրամ են առաջարկել: «Ես դրանի կարիք չունեի», ասաց նա: Գլասմանի ցուցմունքները հաստատելով, Ռոբերը դատավորներին ասաց, որ իրոք իր կինն է «Նովոտել» հյուրանոցում դրամն ստացել Ժան-Ժակ Էյդելիից: Վերջինս այժմ բանտարկված է: Հունիսի 13-ին Պերիգյո քաղաքից Վալանսիեն վերադառնալիս Ռոբերի կինն ավտովթարի ենթարկվեց եւ ներկայումս հիվանդանոցում է: Երբ Ռոբերին հարցրին, թե արդյոք ինքը պատահական է համարում այդ վթարը, նա պատասխանեց, որ եթե դա կազմակերպված է եղել, ուրեմն մարսելցիները վտանգավոր մարդիկ են: Ռոբերը պնդեց, որ «Օլիմպիկի» հետ խաղի ժամանակ ինքը իրոք վնասվածք էր ստացել, որի վրա վալանսիենցի մի հայտնի վիրաբույժ հաջորդ օրը գիպս էր դրել: Ի դեպ, ակումբի բժիշկը եւս ասում է, որ դա վնասվածք է, միայն թե բուժումը փոքր-ինչ անհամապատասխան է եղել: Ռոբերն ասում է, որ եթե նույնիսկ իր ֆուտբոլային կարիերան այժմ ավարտվի, ինքը շատ չի ափսոսա: Միայն ուզում է, որ արդարադատությունը գործը հասցնի ավարտին, որպեսզի ֆուտբոլը մեկընդմիշտ մաքրագործվի:

Առաջիկայում մեր ընթերցողներին կներկայացնենք ֆուտբոլային սկանդալի հետ կապված նոր մանրամասնություններ:

Պատրաստեց
ՊԵՏՐՈՍ ՔԵՇԻՇՅԱՆԸ

Անակնկալ վերջաբան

Գերմանիայում ավարտվեց բասկետբոլի տղամարդկանց Եվրոպայի 28-րդ առաջնությունը: Այն անսպասելի վերջաբան ունեցավ: Ժամանակից շուտ ասպարեզը թողեցին բասկետբոլի եվրոպական գրանդները՝ Իտալիայի, Իսպանիայի, Խորվաթիայի, Հունաստանի հավաքականները: Եզրափակիչ մտավ Ռուսաստանի սերնդափոխված եւ երիտասարդ հավաքականը, ինչպես նաեւ մրցումների կազմակերպիչ Գերմանիայի ընտրանին: Այս երկրի հավաքականը երբեք հաջողություն չի ունեցել Եվրոպայում, եւ նրա արժեթղթերը բարձր չէին գնահատվում: Սակայն մարզական բախտը գերմանացիների կողմն էր եւ ոչ առանց մարզասերների բուռն աջակցության նրանք, շատերի համար անսպասելի, նվաճեցին Եվրոպայի չեմպիոնի կոչումը:

Վճռական մրցավեճը Ռուսաստանի հավաքականի հետ ավարտվեց 71-70 հաշվով: Ուշագրավ է, որ բախտորոշ վերջին 3 հանդիպումներում Գերմանիայի հավաքականը մրցակիցներին՝ Իսպանիայի, Հունաստանի եւ Ռուսաստանի թիմերին հաղթել է ընդամենը մեկ միավորի տարբերությամբ: ■

Վրաստանը եւ Ադրբեջանը նույնպես

Ինչպես հայտնի է, ՈՒԵՖԱ-ն անսպասելի որոշում է կայացրել, որի համաձայն Հայաստանի թիմերն այս տարի չեն մասնակցելու եվրոպական երկրների ակումբային թիմերի պաշտոնական մրցաշարերին: Փորձելով իմանալ դրդապատճառները, ֆուտբոլի ՀՀ ֆեդերացիայի պատասխանատու քարտուղար Էմին Բաղյանը Մոսկվայից տեղեկացել է, որ նույն որոշմամբ ՈՒԵՖԱ-ն եվրոպական մրցաշարերից զրկել է նաեւ Վրաստանի եւ Ադրբեջանի թիմերին: Վերջինս ՈՒԵՖԱ-ի ժամանակավոր անդամ է համարվում: Առայժմ որակազրկման պատճառները հայտնի չեն: Կարելի է ենթադրել, որ դրանք կապված են Անդրկովկասի ռազմաքաղաքական բարդ իրավիճակի հետ: ՀՀ ֆեդերացիան բողոք նամակ է պատրաստում ՈՒԵՖԱ ուղարկելու: ■

Բաժինը վարում է ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԸ

«ՆՈՐՈՒԹՅՈՒՆ ՍԵՐՎԻՍ»

տուրիստական ֆիրման առաջարկում է անհատական եւ խմբային նոր արտասահմանյան շրջագայություններ

Լիբանան	7 օր	(Երեւան-Բեյրութ-Երեւան)
Հարավային Կորեա	6 օր	(Երեւան-Սեուլ-Երեւան)
Հորդանան	7 օր	(Երեւան-Ամման-Երեւան)
Սիրիա	7 օր	(Երեւան-Ամման-Հալեպ-Երեւան)
Հունաստան	4 օր	(Երեւան-Սալոնիկ-Երեւան)
Իտալիա	4 օր	(Երեւան-Վենետիկ-Երեւան)

✔ Բոլոր ուղերթները կատարվում են «Ռուսական ավիագծեր» ավիաընկերության հարմարավետ օդանավերով:

✔ Ելքի փաստաթղթերի եւ մուտքի այցագրերի ձեւակերպումը՝ ամենասեղմ ժամկետներում:

✔ Խմբային զբոսաշրջիկներին զեղչ է արվում:

✔ Շրջագայության արժեքի մեջ մտնում են ինքնաթիռի տոմսը, հյուրանոցում մնալը, սնունդը, որոշակի ժամանակի ուղեկցող անվճար փոխադրումը, օդանավակայանում դիմավորումը եւ հրաժեշտը:

Ուղեւորության պայմանների եւ թռիչքի օրերի մասին կարելի է իմանալ 52-43-51 հեռախոսահամարով:
Ֆիրմայի հասցեն. Երեւան, Խանջյան 28, 3-րդ հարկ:

Հրավիրում ենք գործարար մարդկանց համագործակցելու դեպի ՕՄՍԿ եւ ԽԱԲԱՐՈՎՍԿ բեռներ տեղափոխելու համար:

Հեռախոսներ
58-26-53, 56-49-78

ՀԱՅԿԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

«Հայկական ծրագրեր» ընկերությունն առաջարկում է լավագույն համակարգչային ծրագրերը ԱՊՀ երկրներում:

Հեռ. 252463, 254758, 584545

Վարձով բնակարան քաղաքի կենտրոնում

Առաջարկում է երեք սենյականոց կահավորված, բարեկարգ բնակարան ընդարձակ խոհանոցով, անհրաժեշտ հարմարություններով եւ ավտոտնակով:

Վարձը տարադրամով:
Հեռ. 56-32-59

Փայլուն տեսողություն

«ՕԳՆՈՒԹՅՈՒՆ» կենտրոնը կազմակերպում է տեսողության լավացման կուրսեր ըստ ամերիկյան հայտնի ակնաբույժ Բեյթսի մեթոդի, որը տեսողական խանգարումների բուժման լավագույն եղանակն է: Մենք խոստանում ենք փայլուն արդյունքներ բոլոր նրանց, ովքեր ունեն տեսողության հետ կապված պրոբլեմներ եւ կօգտվեն մեր մասնագետների ծառայություններից:

Հեռ. 34-09-61, 61-61-95

KILIKIA
T. T. S.

«Կիլիկիա - Տ.Տ.Ս.» - ընկերությունը առաջարկում է վարկերի ընդունման նոր տարբերակ.

Երկարաժամկետ վարկերի դիմաց վճարվում է

50% 3 ամսյա պայմանագրի դեպքում
120% 6 ամսյա պայմանագրի դեպքում
300% 1 տարվա պայմանագրի դեպքում

Կնքված պայմանագրերը մնում են ուժի մեջ:

Սայաթ-Նովայի պող. «Անի» հյուրանոց,
7-րդ հարկ, 730, 736 սենյակ
Վարկերի ընդունումը կատարվում է ժամը 10⁰⁰-ից 14⁰⁰-ը երեքշաբթի, չորեքշաբթի եւ հինգշաբթի օրերը:

Հեռ. 58-11-10,
59-43-70

PUBLISET

AIRLINES OF AVIT

«ԱՎԻՏ» ֆիրման կազմակերպում է չվերթներ
ԽԱԲԱՐՈՎՍԿ-ԵՐԵՎԱՆ-ԽԱԲԱՐՈՎՍԿ
Թռիչքները կատարվում են Օմսկ քաղաքով:
Տեղեկությունների համար զանգահարել 56-49-78, 58-26-53

Mercury ENTERPRISE

«Mercury enterprise»-ը

հերթական անգամ անցկացնելով ինվեստիցիոն գործընթացը բնակչությանը հնարավորություն է ընձեռում խնայողությունները պահպանել գերարժեզրկման պրոցեսներից: Ֆիրմայի մասնագետները այս անգամ առաջարկում են ներդրումների հետեւյալ տարբերակները.

1. Եռամսյա ավանդների դեպքում- 15 % ամսական, որը ժամկետի վերջում կկազմի 45 %

2. Վեցամսյա ավանդների դեպքում- 20 % ամսական, որը ժամկետի վերջում կկազմի 120 %

«Mercury enterprise»-ը

երաշխավորում է ձեր գումարների ապահովվածությունը արժեզրկման պայմաններում ամենակայուն ապրանք հանդիսացող անշարժ գույքով:

Երեւան, Սայաթ-Նովայի 19,
«Անի» հյուրանոց, 6-րդ հարկ 636 սենյակ 594-636

ENTERPRISE Mercury

ՁԵԶ ԸՆՁԵՌՎՈՒՄ Է ԲՆԱԿԱՐԱՆԻ ԱՊԱՌԻԿ ԳՆՄԱՆ ԱՆՆԱԽԱԴԵՊ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Դուք կատարում եք սկզբնական վճարումը եւ այնուհետեւ ունենալով 3 ամիս ժամանակ վճարելու մնացյալ գումարը, որից հետո դուք դառնում եք բնակարանի սեփականատեր

«Անի» հյուրանոց 7-րդ հարկ 711 սենյակ հեռ 565649

Լուրերի Հոսք

Էրմիտաժից 100 հազար ցուցանմուշ չի անհետացել

Էրմիտաժի փոխտնօրեն Վլադիմիր Մատվեեւը հերքեց լրատվության որոշ միջոցների հաղորդումները թանգարանի 100 հազար ցուցանմուշի անհետացման վերաբերյալ, որն իբր բացահայտվել էր իրավապահ մարմինների ստուգման ընթացքում: Վ. Մատվեեւը հայտնեց, որ ՆԳ վարչության աշխատակիցների վերջին ստուգումը կատարվել է 1979 թվականին: Այն ժամանակ որոշվել էր անցկացնել Էրմիտաժի ցուցանմուշների «ամբողջական» ստուգում, որը մինչեւ օրս շարունակում է հատկապես ստեղծված վերահսկման բաժինը: Ներկայումս գույքային համարներ են ստացել 2862948 ցուցանմուշներ: Սակայն այդ ցանկում առարկաներն զգալիորեն ավելի շատ են, քանի որ 1 համարով կարող է նշվել, օրինակ, մի ամբողջ լրակազմ: Առայժմ ստուգված չէ միայն դրամագիտության բաժինը, որտեղ են [illegible] ավելի քան 1 միլիոն գույքահամար: Էրմիտաժի ղեկավարությունը գտնում է, որ կեղծ լրատվության տարածումը որոշակի նպատակ ունի: Որոշ հնավաճառներ, փորձելով Արեւմուտքում բարձր գներով իրացնել արվեստի մի շարք առարկաներ, պնդում են, թե դրանք Էրմիտաժի հավաքածուից են: Ներքին գործերի Պետերբուրգի եւ մարզի գլխավոր վարչության մամուլի ծառայությունը նույնպես հերքում է որեւէ ստուգում անցկացվելու փաստը: ԻՏ

Պարսից ծոցում զոհվեց երկու ռուս նավաստի

Հուլիսի լույս 5-ի գիշերը Պարսից ծոցի հարավային մասում վթարի հետեւանքով խորտակվել է ռուսական «Նավապետ Սախարով» բեռնանավը, հայտնեց Հյուսիսային ծովային նավագնացության պետի ծովագնացության անվտանգության գծով տեղակալ Միխայիլ Սուսլինը: Պայթյունի եւ հրդեհի հետեւանքով զոհվել են էլեկտրաեռակցող Կոլյուբենկոն եւ մեխանիկի օգնական Ալեքսին: 25 անդամների փրկել է SOS ազդանշան ստացած «Պյոտր Ստեկլով» շոգենավը: Սուսլինի խոսքերով, նավաստիներին հասցրել են Բահրեյնի նավահանգիստ, իսկ այնտեղից ինքնաթիռով՝ Ռուսաստան: Նավի բարձրացման հարցը կլուծվի ավելի ուշ, երբ հայտնի դառնան վթարի հանգամանքները հետաքննող հանձնախմբի եզրակացությունները, հայտնեց Սուսլինը: ԻՏ

Հանրամատչելի ֆաքս-հեռախոս

«Շլումբերգեր» ֆիրման մշակել է նոր ինքնաշխատ սարք՝ «Պուբլիֆաքս», որը նորույթ է հեռահաղորդակցության բնագավառում: Սարքի կշիռը 40 կգ է, երկարությունը՝ 50 սմ, փոքր-ինչ մեծ է կախովի հեռախոսներից: Այն գործում է բացառապես «հիշողություն» ունեցող վարկային քարտերով: Այդ փոքր հեռախոսախցիկը հնարավորություն է տալիս թե զանգահարել ու լուսապատճեն (ֆաքս) ուղարկել եւ թե ստանալ դրանք: Ֆիրման մտադիր է սարքը փորձարկել օդանավակայաններում, առեւտրի կենտրոններում, երկաթգծի կայաններում: «Պուբլիֆաքսի» վարձը հաշվարկվում է ոչ թե ըստ աշխատանքի տեւողության, այլ ըստ հաղորդված էջերի քանակի: Թվում է, թե բոլոր նախազգուշական միջոցները ձեռնարկվել են սարքի նկատմամբ վանդալիզմը կանխելու նպատակով: ■

Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ

Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635

Խմբագիր
ՅԱՄԼԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ / 581841

Տնօրեն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / 562863

© Apple® Macintosh®
համակարգչային շարվածք
«Ազգ» թերթի

Azg
armenian daily

Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Թերթի ձեւավորման եւ տառատեսակների հեղինակ ՊՈՂՈՍ ՂԱԼԼԱՔՅԱՆ

ՀՀ Նախարարների խորհրդի աշխատակազմի «Տպարանային» հրատ. տպարան, Երեւան 23 Արշակունյաց 2 Գրանցման թիվ 65. Ինդեքս 69149. Տպաքանակ 30 000. Պատվեր 1546 Ստորագրված է տպագրության 6.7.1993